№ 109 ՀԻՆԳՇԱԲԹԻ 22 ՄԱՅԻՍԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 22 ՄԱՅԻՍԻ № 109

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բեռլինի պրօֆ. Պօզների)
ԱՐԴԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ Է ԲԵՐԼԻՆԻՑ և մայիսի 1-ից ընդունում է հիւանդներին ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ: (Կովկասեան հանքային ջրերում):
Հասցէն՝ Пятигорскъ, Елизаветинская ул. д. Архипова, за соборомъ.
(կ. հ.) առ. 104. 50—30

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նազարեան
Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պեատիգօրսկում և Եսենտուկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ:
Հասցէն՝ Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул. д. Архипова.
առ. (Ն.Հ.Կ.) 458. 25—6

ՎԵՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՐԿ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ
ՌԷՍՏՕՐԱՆ ԵՒ ԲՈՒՖԷՏ
Տելեֆօն № 14—66.
Ասիական և եւրոպական կերակուրներ
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ՃԱՇԻ, ԸՆԹՐԻՔԻ ԵՒ ԱՅԼՆ:
ԱՄԵՆ ՕՐ, երեկ. ժ. 7-ից մինչև գիշեր. ժ. 2-ը, իսկ կիրակի օրերը ցեր. ժ. 2—5-ը և երեկ. ժ. 10—2-ը գիշերվայ
— ՆՈՒԱԳՈՒՄ Է —
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ
Լաւագոյն սալօնային խումբը
Լաւագոյն սոլիստների մասնակցութեամբ և ղեկավարութեամբ Լ. ՍՏՈՒԿԻՉԻ
ՋԲՕՍԱՆՔ ՆԱՒԱԿՆԵՐՈՎ
առ. (հ.) 379. 0—4

ՀՐԱՒԷՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՁԱՅՆԱՏՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻՆ

Թեմիս Գերապատիւ Սրբազան Առաջնորդի կարգադրութեան համաձայն, կիրակի, մայիսի 25-ին, ժամը 11-ին, պատարագից յետոյ քաղաքիս բոլոր հայոց եկեղեցիներում (բացի Հրեշտակապետաց եկեղեցուց, որտեղ կատարված է ընտրութիւն) նշանակված է ծխականների երկրորդ և վերջին ժողով՝ ընտրելու իւրաքանչիւր եկեղեցում երկու ներկայացուցիչներ (պատգամաւոր) և երկու անձնափոխանորդ, որոնք թեմիս միւս եկեղեցիների պատգամաւորների հետ ընտրելու են Ներսիսեան դպրոցի համար հոգաբարձուներ: Ուստի սրանով հրաւիրում ենք ձայնատու ծխականներին նշանակած օրը և ժամին գնալ իրանց ծխական եկեղեցին՝ ընտրութեան մասնակցելու:

Գործակալներ՝ (Ա. մասի՝ Սարգիս ա.-ք. Շիօյեանց
(Բ. մասի՝ Ղևոնդ ք. Մամիկոնեանց

(2.) առ. 499. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Վաղը, ուրբաթ, մայիսի 23-ին
ԲԵՆԵՖԻՍ
Րէժիսեօր՝ Ա. Արմէնեանի
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Մասնակց. դերասանների
Կը ներկայացնէ—յայտնի
ՀԵՆՐԻԽ ՆԱՎԱՐԱՑԻ
Պատմական դրամա 5 գործ. Թարգմ. Մաժակի
Ե. գործողութիւնը Բարդուղիմեան գիշեր
(Հուգենօտների կոտորածը)
Հենրիխ Նաւարացու դերը
կը կատարէ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Սկիզբը երեկ. ժամը 8¼-ին:
Տեղերի գները սովորական են
Րէժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
ԱԶԴ.—Չորեքշաբթի, մայիսի 28-ին
Բենեֆիս ՏԻԿ. ՅԱՍՄԻԿԻ
Վարչութեան հերթապահ անդամ՝
ՄԻՔ. ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆ
առ. (ա. օ.) 500. 2—1



ՑԻՐԿ
Ֆ. ԻՒՊԱՏՕՎԻ
Միխայլովսկի պր. № 189, Մուշտայիդի մօտ:
Այսօր, հինգշաբթի, մայիսի 22-ին, տեղի կունենայ ներկայ սէզօնում չեղած խոշոր ներկայացում: Վերջին հրաժեշտի գաստրօլ եգիպտացի Ալիի: Այսօր Ալին իր սովորական սէանսներից զատ՝ ցոյց կը տայ մի շարք նոր նօմէրներ: Միայն այսօր հասարակութիւնը իրաւ կը համոզվի Ալիի սէանսների ապշեցուցիչ լինելու մէջ: Այսօր Ալին կուլ կը տայ երկու աբլատկա զանազան գոյնի, որից յետոյ կը խմէ 20 բաժակ ջուր և այնուհետև իր ստամոքսի մէջ ջուրը կը ներկէ այն գոյնով, որպիսին կը ցանկանայ հասարակութիւնը, և այդ ներկած ջուրը շատրուանի պէս յետ կը թափէ իր ստամոքսից: Կուլ կը տայ կոնացի մի ժամացոյց վերցված հասարակութիւնից, և նորից կը վերադարձնէ բուն պատկանողին: Ալին խնդրում է յարգելի հասարակութեանը չը յուզվել սէանսների ժամանակ, իսկ թոյլ ջղեր ունեցողներին խնդրում է ցիրկ չը գալ: Հասարակութեանը յարմարութիւն տալու համար՝ կասսան բաց է ցերեկվայ ժամը 2-ից: Այսօր ամեն տեսակ կոնտրամարկաներ անվաւեր կը համարվեն:
առ. 501. 1—1

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա գնացող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) առ. 391. 100—10

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Արժանացած մեծ պարգևի: Վաճառվում են ՌՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում:
Ֆաբրիկային իսկական գներով:
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին ոճի, ինչպէս էժանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ: Բացառապէս լուս չափն է 11¼ արշ. երկար.:
Սէզօնային նմուշները ուղարկվում են ՁՐԻ և օտար քաղաքներում:
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(հ. շ.) առ. 509. 50—12

ԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տելեֆօն 4—21.
• Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելօվզօրօվ
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Գ. Տանպարոնեանց
(հ.կ.) առ. 868. 100—56

ԻՍԿ ՈՒՐ ՄՆԱՑԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽԻՂՃԸ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

II

Չը պէտք է որ օտար պետութիւնները միջամտեն Թիւրքիայի ներքին գործերին,—ասում են սօցիալ-դեմօկրատ պատգամաւորները: Եւ որովհետև այդպիսի ներքին գործ նրանք համարում են հայկական րէֆօրմները, ուրեմն, նրանց կարծիքով, ոչ Ռուսաստանը, ոչ եւրոպական միւս պետութիւնները իրաւունք չունէին և չունեն ստիպել Թիւրքիային մտցնել հայկական նահանգներում րէֆօրմներ:

Ահա Զաֆարովի, Զիւնկէլլիի և Սկօբելեվի ճառերի ամբողջ ներքին իմաստը:

Սակայն ոչ մի տարակոյս չը կայ, որ նրանց բերանով խօսում է ոչ թէ սօցիալ-դեմօկրատը, այլ աւելի շուտ մուսուլմանը, վրացին և ազանդաւոր ռուսը: Որովհետև եթէ սօցիալ-դեմօկրատիականութեան նպատակն է ժողովուրդների և անհատների կատարեալ ազատագրութիւնը ստրկութիւնից, տիրապետութիւնը հաւասարակարգի, արդարութեան, ջնջումն անհաւասարութեան, ֆէօդալական ճնշող կարգերի, յաղթանակը արդարութեան և ազատութեան, ապա նրանք պէտք է ողջունէին այն ջանքերը, որ Ռուսաստանը և եւրոպական միւս պետութիւնները կատարում են այդպիսի դրութիւն ստեղծող ամենանախնական բարւոքումներ մտցնելու համար: Եթէ Թիւրքիան լինէր եւրոպական մի պետութիւն, որ ունի փոքր ի շատէ տանելի օրէնքներ, ուր երկրի բնակիչները, հաւասար իրաւունքներով քաղաքացիներ և հպատակներ են, եթէ Թիւրքիան տուած լինէր մինչև այժմ իր քրիստոնեայ հպատակներին մարդկային գոյութեան տարրական իրաւունքներ և ստեղծած լինէր նրանց համար խաղաղ կուլտուրական զարգացման տարրական պայմաններ. եթէ Թիւրք կառավարութիւնը սոսկալի կոտորածներով, ջարդերով, հրդեհներով չը խեղդէր տասնեակ տարիների ընթացքում դժգոհութեան և բողոքի ամեն մի արտայայտութիւն, այդ ժամանակ, այո, իրաւացի կը լինէր ասել, թէ չը պէտք է միջամտել նրա ներքին գործերին և պէտք է թողնել, որ նա ինքը կարգադրէ իր գործերը: Բայց երբ մի պետութիւն կամ մի կառավարութիւն շարունակ կոտորում, ջարդում է իր հպատակներին, որովհետև նրանք քրիստոնեաներ են և ոչ մուսուլմաններ. երբ նա նայում է նրանց վրա իբրև րայաների, որոնք ստեղծված են միայն իր՝ Թիւրքի բոլոր հաճոյքները կատարելու, Թիւրք-մուսուլմանի համար ձրիաբար աշխատելու, նրա հողերը հերկելու. երբ մի կառավարութիւն թոյլ է տալիս վայրագ քիւրդերին և չէրքէզներին կոտորել անմեղ մանկանց, կանանց, ապա աշխարհի ո՞ր օրէնքը, մարդկային ո՞ր խիղճը և բանականութիւնը կարող է ասել, թէ մի՛ միջամտէք, թողէք Թիւրքին, քիւրդին՝ ինչ որ կամենում է անէ: Այդ միևնոյնն է, եթէ իմ դրացու տունը հրդեհ ընկնի և, չը նայած որ տան մէջ ապրողները կարող են այրվել, չը նայած որ հրդեհը կարող է տարածվել և իմ տան վրա—դուք ասէք. «ձեռք մի տուէք, մի գնացէք հանգցնելու հրդեհը, դա տանտիրոջ գործն է»: Ոչ, մարդկային առողջ բանականութիւնը այդպէս չէ դատում. նա անմիջապէս օգնութեան է հասնում ընկերին, այրվողին և աշխատում է փրկել նրան:

Այդպէս դատում էին և պահպանողականութեան և ռէակցիայի ներկայացուցիչներ Բիկօնսֆիլդը, Սօլզբիւրին, Լօբանօվ-Ռօստովսկին, Հանօտօն, երբ նրանք անտարբեր դիրք բռնեցին և թոյլ տուին արիւնարբու կարմիր սուլթան Համիդին կոտորել 100,000 հայեր, մարդկային հեկատոմբերի լեռներ կուտակել, ասելով «Մենք իրաւունք չունենք միջամտել մի այլ երկրի ներքին գործերին»: Բայց այդպէս չէին դատում և մտածում մարդասէր Գլադստօնները և շատ նշանաւոր քաղաքական գործիչներ, որոնք եւրոպական կառավարութիւնների այդ յանցաւոր անտարբերութիւնը և դահճապետի ձեռքը չը բռնելը նշաւակեցին և անարգանքի սիւնին գամեցին:

Մ՛ի՞թէ կարելի է անտարբեր մնալ և նայել, թէ ինչպէս մի հարևան երկրի մէջ օրէնքների բացակայութեան պատճառով մորթում, ջարդում, այրում են քո եղբայրներին, մարդկային էակներին, վերածում են կենդանի մնացածների կեանքը անասնական կեանքի, և ասել՝ «Մենք իրաւունք չունենք միջամտել այդ երկրի ներքին գործերին»: Մ՛ի՞թէ իր հպատակներին, քաղաքացիներին կոտորելը, ջարդելը, այրելը ներքին գործ է:

Եթէ Թիւրքիայում լինէին փոքր ի շատէ տանելի կարգեր, փոքր ի շատէ արդար օրէնքներ, եթէ այդտեղ լինէին մարդկային գոյութեան և խաղաղ զարգացման գոնէ տարրական պայմաններ, այն է՝ կեանքի, գոյքի և պատւի ապահովութիւն, մենք էլ կը ձայնակցէինք և կասէինք, այո, մի միջամտէք նրա ներքին գործերին. թողէք նա ինքը կազմակերպվի, ոտքի կանգնի և իր գործերը տնօրինի:

Բայց Զաֆարով, Զիւնկէլլի, Սկօբելեվ, որոնք անշուշտ ազէտ չեն պատմութեան մէջ, գիտեն, որ այդպիսի պայմաններ չը կան և այնու ամենայնիւ կրկնում են՝ «Մի միջամտէք Թիւրքիայի ներքին գործերին»:

Հետևաբար, նրանց բերանով խօսում է ոչ թէ սօցիալ-դեմօկրատը, այլ մուսուլմանը, վրացին և ազանդաւոր ռուսը:

Եթէ անկեղծ են նրանց խօսքերը, թէ Թիւրքիայում պէտք է բոլոր աշխատաւոր մասսաները միանան տիրող աւատական դասակարգերի և պետութեան դէմ, ի՞նչպէս նրանք չեն հասկանում, որ հէնց յանուն աշխատաւոր մասսաների շահերի պէտք է ստիպել, հարկադրել Թիւրքաց կառավարութեան մտցնել բարեկարգութիւններ երկրի մէջ, գոնէ ամենատարրական րէֆօրմներ, որովհետև մինչև որ այդ տարրական րէֆօրմները չը մտցվեն, աշխատաւոր մասսաները ոչ մի հնարաւորութիւն չեն ունենայ կռւել աւատական, բռնակալ դասակարգերի դէմ և ձեռք բերել հետզհետէ իրաւունքներ, այլ նրանք ստիպված կը լինեն կամ գաղթել կամ նրանց Թիւրք կառավարութիւնը կոտորել կը տայ և կը պահէ անասնական դրութեան մէջ, ինչպէս այժմ է.

Ոչ, մարդկային խիղճը և արդարութիւնը չէ, որ խօսում է իրանց սօցիալ-դեմօկրատիայի ներկայացուցիչ համարող պատգամաւորների լեզւով. Դա շօվինիստ, ռեակցիոն մուսուլմանի, վրացու և ազանդաւոր ռուսի զգացումն է:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

20 մայիսի

ԴՈՒՐԱՑՑՕ.—Պ. Հ. Գ. թղթակիցը պարզեց, որ շարժումը վերահաս չէր Ալբանիայում գտնվողների համար: Անկարգութիւնների մի ֆակտոր անկասկած համդիսանում է Եսադ-փաշան, որ ունի ահագին ազդեցութիւն տեղական ազգաբնակութեան մէջ: Բացի դրանից դեր խաղաց նաև իսլամ-թիւրքերի ագիտացիան և Ալբանիայի հիւսիսի և հարաւի վայրենի ցեղերի փոխթշնամութիւնը, ինչպէս նաև գիւղացիների դէպի բէյերն ու փաշաները դաժան թշնամութիւնը: Ալբանիայի իշխանը մեղադրվում է կողմնակի ազդեցութեանը ենթարկվելու ձգտում ունենալու, ինքնուրոյն չը լինելու, շռայլութեան, յանուն բէյերի փառասիրութեան մինիստրական շատ պորտֆէլներ ստեղծելու և ժողովրդից մեկուսանալու մէջ: Մասնաժողովի անդամների մէջ այն հաւատն է տիրում, թէ Դուրացցօն գրաւելու թոյլտւութիւնը կազդէ ապստամբների վրա, բայց ոչ յօգուտ խաղաղութեան, այլ կը բարդացնէ մասնաժողովի աշխատանքը, որ այսօր մեկնում է Տիրանա Շիակի, Կավայի և Տիրանայի ներկայացուցիչների հետ բանակցելու համար:

ՊԱՐԻԶ.—Արտասահմանեան քաղաքային ինքնավարութիւնների պատգամաւորութիւնները քաղաքային հաստատութիւնները դիտելուց յետոյ ընդունվեցին Պարիզի քաղաքային վարչութիւնից, յետոյ պրեզիդենտ Պուանկարէից. երեկոյեան կը կայանայ ճաշ:

Առաւօտը կայացաւ մինիստրների խորհրդի նիստը, ուր Դումէրգը յայտնեց, որ իր գործը կատարված է համարում, երկիրը ցանկանում է հետևել բացառապէս ձախակողմեան քաղաքականութեան: Երկրի ներսի դրութիւնը պարզվել է, իսկ արտաքինը ներկայանում է լաւ: Նիստից յետոյ Դումէրգը և կաբինետի անդամները պրեզիդենտ Պուանկարէին ներկայացրին հրաժարականի խնդրագիր: Պրեզիդենտը խնդրեց շարունակել վարել հերթական գործերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մինչև վերջին թելը այրվեց «Էդէմ» ամառային թատրոնը:

Արևմտեան Կովկասի գրաւման 50-ամեակի առիթով Սերգիևսկի տաճարում կատարվեց հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայևիչի յիշատակին:

Առաւօտը երևան հանվեց գողութիւն երկաթէ գանձարկղից Հիւսիս-Դօնէցկի երկաթուղու վարչութեան մէջ: Անյայտ չարագործները կոտրել են արկղը և գողացել են ծառայողների ռոճիկները տալու համար պահվող 20,000 րուբլին, նաև 100,000 ր. խոշոր ակցիաներ:

ՍՈՒԽՈՒՄ.—Տուապսէի շրջանում երևացել են դաշտային մկներ, որոնք փչացնում են բուսեղէնը և բերքը: Վնասները շատ մեծ են: Զառնաքաթի հակաժանտախտային կայանը հրաժարվեց, դրամ չը ստանալու պատճառով, ուղարկել Չերնոմորի նահանգապետին մկնդեղ:

ՏԱՐՍ.—Իրտիշի ջուրը շարունակ աւելանում է. շատ գիւղեր վնասվել են:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՔԻՒՐԴԵՐԸ

Հոգ տանելով Հայաստանում բարենորոգումներ մտցնելու մասին,—ասում է «Bulletin du comité de L'Asie Française»,—չը պէտք է ի նկատի ունենալ միմիայն հայ տարրը:

Այն փաստը, որ շարունակ խօսում են «հայոց հարցի» մասին, հայկական րէֆօրմների մասին, երբէք չը յիշելով քիւրդերին, խորապէս վիրաւորում է վերջիններիս ազգային և կրօնական ինքնասիրութիւնը և նրանց բերում է այն մտքին, որ այդ րէֆօրմների միակ նպատակն այն է, որ իրանց հպատակեցնեն հայերին և, որ գլխաւորն է, նրանց հոգում արհամարհանք է զարգացնում դէպի հայերը, որպիսի զգացմունքի սերմը պատւաստված է դեռ Աբդիւլ-Համիդի կողմից:

Աւելի քան անհրաժեշտ է լուրջ զբաղվել քիւրդ տարրով, որովհետև իսկապէս մեծամասնութիւն է կազմում այն երկրում, որ Հայաստան է կոչվում:

Ընդհանրապէս քիւրդերին հաշւում են մօտաւորապէս 3 միլիոն. դրանցից 2.000,000 Թիւրքիայում են, 700,000 Պարսկաստանում և 300,000 Ռուսաստանում: Թիւրքիայում նրանք ապրում են բաւականին ամփոփ խմբերով:

Հայերն էլ մօտաւորապէս այդքան են. Թիւրքիայում ապրում են 1.300,000 հայեր, Ռուսաստանում 1.100,000, Պարսկաստանում 100,000, մնացեալները ցրված են ամենուրեք՝ Ամերիկա, Եգիպտոս, Լեհաստան, Ռումինիա, Բօլգարիա և այլուր: Ոչ մի տեղ Փոքր-Ասիայում հայերը չեն ապրում ամփոփ խմբերով: Դրանով է բացատրվում նրանց քաղաքական թուլութիւնը, նոյնպէս և, միւս կողմից, նրանց առևտրական աջողութիւնը. այդ բանը միանգամայն ուտոպիա է դարձնում մի քանիսի երազը, սակայն շատ քչերի, հայկական ինչ-որ թագաւորութեան մասին, որի համար նրանք, հաւանական է, իրանք էլ տեղ չը կարողացան գտնել։

Քիւրդերը սկսում են յայտարարել իրանց մասին և առաջադրել պահանջներ, յետ չը մնալով հայերից։ Ռուսների՝ Ատրպատական մտնելովը քիւրդերի և հայերի պահանջներին բաւարարութիւն տալը այլ ևս անկարելի է յետաձգել։ Համենայն դէպս, չը կայ իսկական հայոց հարց, այլ կայ միայն քիւրդ-հայկական հարց, որը հասունացել և իր անյետաձգելի լուծումն է պահանջում։ Բայց նախ քան բարենորոգումներ մտցնելը Ասիական Թիւրքիայի արևելեան վիլայէթներում՝ պէտք է ուսումնասիրել մտցվելիք այդ բարենորոգումները երկու տեսակէտից՝ քիւրդական և հայկական։ Պօղոս Նուպար-փաշան շարունակ պնդում էր, որ բարենորոգումները հարկաւոր են ոչ միայն հայերի համար, այլ հայկական վիլայէթների բոլոր բնակիչների համար։

Բարենորոգումներ տալ միայն հայերին՝ նշանակում է նրանց հասցնել ֆիասկօյի. նշանակում է, բացի այդ, Եւրոպայի հեղինակութեան օգնութեամբ, թոյլ տալ բացարձակ անարդարութիւն յօգուտ հայերի և ի վնաս երկրի միւս էտնիկական տարրերի։

Քաղելով վերոյիշեալ յօդուածը «Зак. Рѣчь»-ից, մեր կարծիքը մենք կը յայտնենք յաջորդ անգամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՄԱՆ ՇՐՋԱՆԻՆ

(Մայիսի 21-ին, 1914 թ., Ալուպկայում)

Կովկասեան փառապանծ զօրքին

Դէպի ձեր նախորդների փայլուն արշաւանքները ունեցած խորին յարգանքի զգացմունքով ողջունում եմ ձեզ այսօրվայ՝ Արևմտեան Կովկասը գրաւելու և կովկասեան պատերազմը վերջանալու յիսնամեայ յոբելեանի օրով։

Այդ պատերազմը տարվեց Կասպից ծովից մինչև Սև-ծովը ամբողջ տարածութեամբ։ 1859 թ. օգոստոսի 25-ին Գունիբի առումով և Շամիլի գերումով ֆելդմարշալ իշխան Բարեատինսկին, որ անձամբ վարում էր պատերազմական գործողութիւնները, անդորրութիւն մտցրեց Չեչէնում և Դաղստանում և դրանով հաստատ հիմք դրեց Կովկասի միւս լեռնական ցեղերին նուաճելուն։ Ֆելդմարշալի սկսած Անդրկուբանեան երկրի և Սև-ծովի ափերի պատերազմը վերջացրեց նրա Օգոստափառ յաջորդը, Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչը։

Կովկասեան զօրքերի անխոնջ աշխատանքները, որ տարվում էին կոմս Եւդօկիմովի և Օգոստափառ գլխաւոր հրամանատարի ղեկավարութեամբ, պսակվեցին կատարեալ աջողութեամբ։ Չերքեզական ցեղերի մնացորդները ստիպված եղան հպատակվել ռուսական իշխանութեան։ 50 տարի սրանից առաջ Չերնոմօրի նահանգի Կրասնայա Պոլեանայում, ներկայութեամբ ձեր ռազմիկ նախորդների և Մեծ Իշխանի կատարվեց հանդիսաւոր մաղթանք կովկասեան պատերազմը վերջացնելու առիթով։

Հասաւ այնքան ցանկալի վերջը արիւնալի պայքարի։ Անդրկուբանի և Չերնօմօրեան հարուստ երկիրը շուտով ծածկվեց ստանիցաներով ու գիւղերով։ Թշնամի ժողովուրդները, որ ոչինչ չէին ճանաչում, բացի սրի ոյժից և քմահաճոյքից, կարողացան նուիրվել խաղաղ, ազատ աշխատանքների։ Ռուսական օրէնքների խնամատարութեան տակ նրանք իմացան ազատ կենցաղի օգուտը և նրանց բարեկեցութիւնը հետզհետէ աւելացաւ, երկրի կուլտուրական զարգացման հետ միաժամանակ։

Լեռնականների հետ ունեցած երկար կռւում կովկասեան զինւորը բազմաթիւ ապացոյցներ է տուել հերոսական անձնազոհութեան, բարձր զինւորական ոգու և դէպի Թագաւորն ու Հայրենիքն ունեցած սիրոյ։ Դրանում էր կայանում նրա կարողութիւնը, նրա անխորտակելի և թշնամիների համար ահարկու ոյժը։ Նա պէտք է յաղթէր ոչ միայն քաջ պատերազմիկ հակառակորդին, այլ և իրան բնութեան, երբ նա պարտքի կատարման գիտակցութեամբ մտնում էր անմատչելի լեռների կիրճերը և դարաւոր անտառների խորքերը։ Ես ինքս, ժամանակցելով այդ արշաւանքներին, վկայ եմ եղել փայլուն արիութիւնների, արտասովոր գործերի և զրկանքների, որ կատարել և կրել են կովկասեան զօրքերը։

Կովկասեան զօրքի այդ արիութիւնները իր ժամանակին զարմանք էին պատճառում ողջ աշխարհին. այդ արիութիւնները անցել են զօրքին՝ սերնդից սերունդ, նրանք պահպանել են պատերազմական փառաւոր տրադիցիաներ։ Կովկասեան զօրքերին շնորհված պատերազմական քաջութեան նշանները խօսում էին նրանց արարքների մասին Պսակակիր Թագաւորների և Ռուսաստանի առաջ։

Տօնելով այսօր կովկասեան պատերազմի վերջացման յիսնամեակի յոբելեանը, հարկը տանք ձեր նախորդներին, որոնք արիւնով ու կեանքով դրոշմել են իրանց անսահման նուիրվածութիւնը և հաւատարմութիւնը առ Թագաւորները և Հայրենիքը և դրանով արժանացել ժառանգների երախտագիտութեան։ Յիշենք ուրեմն այժմ և մեր փառապանծ զօրապետներին, որոնք ռուսական զօրքին տարան դէպի փառքը,— ֆելդմարշալ իշխան Բարեատինսկուն, կոմս Եւդօկիմովին և ի Տէր հանգուցեալ Օգոստափառ գլխաւոր հրամանատար՝ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչին։

Բաղդաւոր եմ և ես, որ ինձ վիճակվեց գլուխ կանգնել ինձ հարազատ կովկասեան զօրքին այսօրվայ յոբելեանը տօնելու։ Բաղդաւոր եմ ես և նրանով, որ դուք, թանկագին ռազմիկ գործակիցներ, արժանաւոր յաջորդները հանդիսացաք անցած կիսադարի ընթացքում եղած կովկասեան հին զօրքերի։

Մնացէք ձեր հայրերի և պապերի խիզախական աւանդակիրները, և թող կովկասեան զօրքի փառաւոր անցեալը գրաւական ծառայի նրա յետագայ աջողութիւնների համար։

Ստորագրեց՝ Շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատար, գեն.-ադիւտանտ
Կոմս Վորոնցով-Դաշկով

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ծխ. դպրոցի ապահովութեան հարցը

Գորի, 16 մայիսի

Կիրակի, մայիսի 11-ին, տեղս ժամանեց մեր համաքաղաքացի և մեր ծխ. դպրոցի բարերար Կոնստ. Միք. Ալիխանեանցը, որին երկաթուղու կայարանում դիմաւորեց դպրոցի հոգաբարձութիւնը, բարի գալուստ մաղթելով նրան։ Կայարանից նա դիմեց դէպի իր կառուցած դպրոցական երկյարկանի հոյակապ շինութիւնը, և տեսնելով նրա քայքայված դրութիւնը, խոստացաւ իր սեփական ծախսով վերանորոգել, որի համար խնդրեց հոգաբարձութեանը կազմել նախահաշիւ։ Վերանորոգումը կը պահանջի մօտ 2000 ր.։

Կ. Ալիխանեանը ապա լսելով հոգաբարձութիւնից դպրոցի նիւթական անել դրութիւնը և ցանկանալով ընդ միշտ ապահովել ուսումնարանը՝ խոստացաւ ս. Ստեփաննոս քարաշէն եկեղեցու բակում իր ծախսով չորս խանութ շինել, որոնց վարձը՝ մօտաւորապէս տարեկան 800 ր.՝ կը ստանայ դպրոցը։ Այս չորս խանութների կառուցումը գլուխ կը բերվի ոչ պակաս քան 5000 ր.։

Մ. Մարութեան

Եկեղեցական խնդիր

Քերքի (Անդրկասպ. երկիր), 11 մայիսի

1912 թւին, երբ տեղս ժամանեց Թուրքեստանի ընդհ. նահանգապետ գեն. Սամսոնովը, տեղիս հայ գաղութը մի խնդրագիր ներկայացրեց նրան, որպէսզի պատշաճաւոր վարչութիւնը որոշ հողամաս զիջէ իրան՝ հայկական աղօթատան հիմք դնելու համար։ Հայերի խնդիրը յարգվեց, և արտօնվեցին հայերը կառուցանել իրանց համար աղօթատուն տեղիս հայոց ծխ. դպրոցի առաջ ընկած հողի վրայ։ Սակայն դեռ ևս անյայտ է, թէ երբ է հիմք դրվելու տեղիս հայոց աղօթատան։ Մինչև այսօր ժամերգութիւնը կատարվում է դպրոցի դահլիճում։

Ազիմ

Նորութիւններ Լագօդաղից

Լագօդաղ, 16 մայիսի

Ամսիս 15-ին, Համբարձման տօնի օրը, աւանիս ս. Աստուածածին եկեղեցում, պատարագից յետոյ, կայացաւ ծխ. ընդհ. ժողով Բ. ք. Սուքիասեանի նախագահութեամբ՝ մի լիազօր ընտրելու, որ թեմիս միւս լիազօրների հետ ընտրէ Ներսիսեան դպրոցի հրաժարված հոգաբարձուների տեղը նորերը։ Միաձայն բաց քուէարկութեամբ ընտրվեց Խաչ. Նարինեանը, իսկ անձնափոխանորդ՝ Մին. Լէկրեանը։

Նոյն երեկոյեան հայոց դպրոցի թատերասրահում նոյն դպրոցի երկսեռ սաները խաղացին Խ. Մ. Բարայեանի «Նոր ընկերուհի», Սէյրիի «Դերձակի աշակերտը» և Ստ. Լիսիցեանի «Քաջ զինւորներ» մանկական պիէսները։ Ներկայացումը անցաւ շատ կենդանի. ներկայ եղողները գոհ մնացին։

Այստեղ տարածված է երեխաների մէջ սկարլատինա հիւանդութիւնը, որ անցնում է շատ թեթև։

Բ. ք. Սուքիասեան

Եղանակները Լօռու շրջանում

Գիւլագարակ, 15 մայիսի

Լօռու սարահարթի անձրևոտ ու մշուշապատ կլիմային 4—5 տարի յաջորդել էր դաշտային, անանձրև կլիմա, որով և առատ պտղաբերութիւն ու լիութիւն, սակայն այս տարի վերսկսում է իր հին, անդուրեկան, անարգասաբեր, խոնաւ կլիման։ Ապրիլեան տեղ-տեղ ախրայուշ և Լօռու ձիւնախառն անձրևոտ օրերին յաջորդել է յետ կէսօրվան պարբերական կանոնաւոր անձրևների շրջանը։

Լօռին վերադառնում է իր վաղեմի անձրևոտ, մշուշապատ, սակաւաբեր տարիներին։

Թ. Իսկէնտէրեան

Հոգաբարձական ընտրութիւն

Ախալցխա, 15 մայիսի

Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու ծխ. հոգաբարձութեան ներկայ կազմի երեք տարվայ պաշտօնավարութեան ժամանակամիջոցը այս տարի լրացած լինելով, անցեալ կիրակի օրը տեղի ունեցաւ նոր կազմի ընտրութիւնը։ Վերընտրվեցին միևնոյն անձինք, բացի մէկից, որը քաղաքից բացակայ լինելու պատճառով և ցանկութիւն չունենալով իր թեկնածութիւնը ևս դնել, փոխարինվեց նոր անդամով։ Այսպիսով, ուրեմն, կարելի է ասել, որ հոգաբարձական նախորդ կազմը համարեա ամբողջովին մնում է իր պաշտօնում և էական փոփոխութեան չէ ենթարկված։

Երբ անցեալ տարի քննիչ յանձնախումբը պաշտօնավարող հոգաբարձութեան դրամական հաշիւները և գործունէութիւնն էր քննում, կային կարծողներ, թէ այդ քննութեան հետևանքով կարող էր անվստահութիւն արտայայտվել ծխական ժողովի կողմից և նոյնիսկ հոգաբարձութեան կազմը տապալվել։ Այդպէս մտածողները իրանց կարծիքը հիմնաւորում էին այն բանով, որ քննիչ յանձնախումբը իր զեկուցման մէջ մի քանի դիտողութիւններ արած էր հոգաբարձութեան գործունէութեան վերաբերմամբ, որոնց առիթով թէև հոգաբարձութիւնը տուեց իր արդարացուցիչ բացատրութիւնը, բայց այնուամենայնիւ սպասվում էր, որ քննիչ յանձնաժողովի մի քանի անդամների ցոյց տուած չափազանց մեծ եռանդը, ինչ գնով էլ որ լինի՝ մեղադրել հոգաբարձութեան գործելակերպը, իր ազդեցութիւնը կունենայ ծխական ժողովում և հոգաբարձութիւնը կը տապալվէր։ Բայց այդպիսի բան տեղի չունեցաւ և հին կազմի վերընտրութիւնը, որին կողմնակից հանդիսացան նաև քննիչ յանձնաժողովի վերև յիշված եռանդուն հակառակորդները, եկաւ ապացուցելու, որ ժողովուրդը լիովին վստահացած է եղել նախորդ հոգաբարձական կազմին. միևնոյն ժամանակ սա մի ապտակ է, որ ժողովուրդը տալիս է հոգաբարձութեան անցեալ տարվայ քննադատներին, որոնք փորձեր էին անում անտեղի մեղադրանքներով դատապարտել հոգաբարձութեան գործունէութիւնը։

Նոր կազմի ընտրութիւնը նշանակելի է նաև նրանով, որ բացի մի քանի հակառակորդներից, տեղիս յաջորդ Իսահակ վ. էլ փորձեր արած էր հոգաբարձութիւնը վարկաբեկել ժողովրդի աչքում նոյնիսկ եկեղեցու բեմից, և այդ ձևի քննադատութիւնն անգամ ոչ մի արդիւնք չունեցաւ։ Մեր յաջորդի դժգոհութեան պատճառները բոլորովին այլ աղբիւրներից էին բղխում. այդ բանը մասամբ անձնական բնաւորութիւն ունի, որը աւելորդ եմ համարում այստեղ շօշափել, մասամբ էլ նրանից, որ հոգաբարձութիւնը իր գործերը վարում էր միմիայն ծխականների արտայայտած ցանկութիւններին հետևելով և անտես էր առնում հոգևոր իշխանութիւնից եկած այն առաջարկութիւնները, որոնց ժողովրդի իրաւունքը ոտնահարող բնոյթ էին կրում։

Ցանկանալով աջողութիւն նոր հոգաբարձութեան, յոյս ունենք, որ նա իր գործը անշեղ կերպով ապագայում ևս կը կատարէ այնպէս, ինչպէս այս անցած երեք տարում։

Գ. Արաբեան

Նորընտիր հոգաբարձութիւն

Ղուշթառակ (Ղազ. գաւ.), 16 մայիսի

Գիւղումս դպրոց բանալու առիթով ժողով եղաւ Մեսրոպ քահանայ Էվլեանի նախագահութեամբ. հոգաբարձուներ ընտրվեցին Յարութիւն ք. Ծուղուրեանը, Սահակ ք. Թիրաքեանը, Ստ. Տէր-Սարգսեան Պօղոսեանը և Խաչատուր Օհանեանը. իսկ Մովսէս Մովսէսեանն ընտրվեց երէցփոխ։ Առաջնորդը հաստատել է սրանց։

Կարծում ենք, որ նորընտիր հոգաբարձուները կը շտապեն վերջապէս իրագործել մեր գիւղական հասարակութեան փափագը և շուտ կազատեն 150 տունից աւելի մեր խեղճ գիւղի երեխաներին խաւարից ու տգիտութիւնից։

Յ.

Գեղարուեստի ասպարիզից

Պետերբուրգ, 14 մայիսի

Մայիսի 12-ին Պետերբուրգի Կայսերական Կոնսերվատորիայում վերջացան քննութիւնները։

Բոլոր վերջացնողները 125 հոգի էին, որոնցից միայն 80 հոգին արժանացան դիպլոմի, իսկ մնացած 45-ը ստացան ատեստատներ։

Այդ 80 հոգու մէջ են նաև մեր 5 հայ օրիորդները և երիտասարդները՝ օր. Ն. Տիգրանեան (դաշնամուր), օր. Ա. Ամիրաղեան (դաշնամուր), օր. Աբրամկլիսեան (դաշնամուր), պ. Կիրիլեան (ջութակ), պ. Ա. Տէր-Ղևոնդեան (տեօրիա և կոմպօզիցիա)։

Սրանք նոյնպէս ստացան դիպլոմներ, այսինքն званіе свободнаго художника.

Կայսերական թատրոնների դիրեկցիան վերանորոգեց իր պայմանները հայազգի բարիտօն պ. Կարակաշի հետ նորից երկու տարով, 7000 և 8000 ր. տարեկան։

Գ. Կորժինեան

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Գանձակ, 4 մայիսի

«Մշակի» №89-ում տպել էի քաղաքիս ս. Յովհաննէս եկեղեցու միաբան Մկ. ք. Տէր-Յովսէփեանի կենսագրութիւնը. իսկ № 93-ում նոյն եկեղեցու երէցփոխ Ս. Աղեքեանը հրաւէր է կարդում ճեմարանաւարտ ցանկացողներին փոխարինելու հանգուցեալ Տէր-Յովսէփեանին։ Երէցփոխը յապահովութիւն ճեմարանաւարտի յայտարարում է, որ «քահանայացուն կունենայ 160—180 տուն ծուխ և տարեկան մօտաւորապէս 1200 ր. արդիւնք. կունենայ և պետ. դպրոցներում կրօնի դասեր»։

Կատարելապէս համակրելով ճեմարանաւարտ քահանայացու ունենալու մեծ ցանկութեան, այն էլ մի յետ ընկած և թմրութեան խաւարի մշուշով պատած վայրում, որպիսին է պատմական Գանձակ քաղաքը, ես միւս կողմից՝ որպէս հանգուցեալ Տէր-Յովսէփեանի ծխական և մօտ բարեկամ՝ չեմ կարող չը յայտարարել ի լուր ընտրող ծխականների և ընտրվող քահանայացուի հետևեալ տեղեկութիւնները, որ լսել եմ հանգուցեալից իր կենդանութեան ժամանակ։

Նախ՝ հանգուցեալի ծխերի թիւը 130-ից դէնը չէ անցնում, եղածներն էլ (բացի 30—40 տնից) Աստուած ծխական համարի, իրանց չքաւորութեան պատճառով։ Իրաւ է, հանգուցեալը նախ քան հայ-թուրքական կոտորածը ունեցել է 200 տուն ժողովուրդ, բայց այնուհետև 70 տնից աւելի պակասում են. քիչ մասը անցնում է զանազան քաղաքներ բաղդ որոնելու, իսկ մեծ մասը՝ 50 տնից աւելի՝ անցնում է Կովալևկա քաղաքամասը (նախկին Կորիւնապատ), որտեղ ինչպէս նրանց, նոյնպէս և մնացած քահանաների հարիւրաւոր անցած ծխականներին հովւելու իրաւունքը իրանց քահանաներին հոգևոր իշխանութեան կողմից արգելված է։

Եւ երկրորդ, որ ինչպէս հանգուցեալ Տէր-Յովսէփեանի, նոյնպէս և առ հասարակ քաղաքիս միւս քահանաների ծխականների թիւը շատ սահմանափակ է (հակառակ 57-դ յօդ. ծխ. կանոնադրութեան, որով իւրաքանչիւր քահանայ պիտի ունենայ 250 ծուխ). այդ երևում է հանգուցեալի 1913 թ. կատարած օրինակատարութիւնից, որ վերցրել եմ եկեղեցու չափաբերական մատեաններից։ Մկրտութիւն ունեցել է 36, պսակ 11 և ննջեցեալ՝ փոքր և մեծ՝ 17։

Բաժանելով վարձատրութիւնը միջին թըւերի՝ կը ստացվի հետևեալ արդիւնքը. մկրտութիւնից (2-ական ր.) 72 ր., պսակից (8-ական ր.) 88 ր. և թաղումից (5-ական ր.) 85 ր.։ Գումար 245 ր.։ Ջրօրհնէաց և Զատկի տնօրհնէքից և գերեզմանօրհնէքից 250 ր., եկեղեցու գանձանակադրամից 30 ր.։ Համագումար տարեկան 525 ր.։

Առաջ բերելով հանգուցեալից լսածներս՝ ծխերի թւի և թէ ստացած եկամուտի միջին թւերի հաշւի մասին, ես կարծում եմ, որ յարգելի ծխականները, նոյնպէս և երէցփոխը կը համոզվեն գրածներիս և չեն կասկածի, մանաւանդ որ ամեն մի ծխականի (նոյնպէս և ինձ՝ որպէս նրա ծխականի) շատ լաւ յայտնի է թէ տնօրհնէքների և թէ առ հասարակ միւս օրինակատարութիւնների համար մեր քահանաներին տրված վարձատրութեան չափը. հակառակ դէպքում՝ երևակայական 1200 ր. եկամուտի մասին պատասխանատուութիւնը ճեմարանաւարտ ապագայ ծխատէր քահանայի առաջ թողնում եմ իրանց ծխականների և լիազօր երէցփոխի վրայ։

Թող ընթերցող ծխականները չը կարծեն, որ ես հակառակ եմ ճեմարանաւարտ քահանայ ունենալու մտքին և գիտմամբ խոչընդոտներ եմ առաջ բերում. ոչ. քաւ լիցի. բայց և չեմ կարող լռութեան տալ, երբ մարդիկ գիտութեամբ թէ անգիտութեամբ երևակայական եկամուտների արդիւնքի խաբուսիկ յոյսերով ճեմարանաւարտ քահանայ հրաւիրելով կը թողնեն վերջինիս ապագայում յուսահատ դրութեան մէջ. լաւ է այժմեանից, յարգելի ծխականներ, ամեն ինչ պարզաբանել, քան թէ խղճի դէմ գործել՝ չեղածից աւելին ցոյց տալով։

Գանձակը ունի 2 եկեղեցի և 8 տեղացի քահանայ. վերջինները իրանց գոյութիւնը, մանաւանդ հայ-թուրքական կոտորածից յետոյ, մի կերպ կարողանում են պահպանել համաքաղաքացի նիւթական միջոցներից զուրկ (շատ քիչ բացառութեամբ) ծխականների տուած տուրքերով. դրսից եկած ճեմարանաւարտ քահանայի համար շատ դժուար կը լինի ընդունված կարգով (տուրքերով) պահպանել իր և իր ընտանիքի գոյութիւնը այնպէս, ինչպէս որ տեղացի քահանաները։

Ուստի առաջարկում եմ հանգուցեալ Մկ. քահ. Տէր-Յովսէփեանի ծխականներին, որոնցից մէկն էլ նուաստս է, թողնել օրինակատարութիւնների համար տրվելիք վարձատրութեան սովորութիւնը մի կողմը և առաջին օրինակը դառնալով քաղաքումս սահմանել ռոճիկ՝ նշանակելով առ այժմ տարեկան 1200 ր., և այդ պատուաւոր ճանապարհով միայն դուք կունենաք արժանաւոր ճեմարանաւարտ քահանայ և բարի օրինակ ապագայում միւս ծխականներին. հակառակ դէպքում՝ դուք չը կարծէք, թէ ձեր ընտրած քահանան գաղափարի զոհ կը լինի և կը մնայ ընդ միշտ Գանձակում. նա երբ ուսումնասիրի ձեր նիստ ու կացը և տուած արդիւնքի չափը և տեսնի, որ բոլորը սին խոստումներ են եղել (525 ր. տեղ 1200 ր. ցոյց տալով), օր առաջ կը շտապի հարուստ և մեծ քաղաքներում տեղ որոնել, ապահովելու համար իր ընտանիքի գոյութիւնը։

Երկուսից մէկը։ կամ պէտք է ռոճիկ սահմանել նշանակելով տարեկան, ինչպէս յիշեցի, դէթ 1200 ր. և կամ թէ քահանայացու որոնել գանձակեցի թեմականաւարտներից, որ փախչելու տեղ չունենալով կը մնայ ընդ միշտ ձեզ հետ, ձեր շրջանում։

Իսկ եթէ թեմականաւարտն էլ խոյս տալու լինի արդիւնքի սակաւութեան (525 ր.) պատճառով, յամենայն դէպս նպատակայարմար կը լինի, կարծում եմ, որ ծխականները եկեղեցու մնացած երեք քահանաների վրայ բաժանվէին, ի հարկէ ով ում կը ցանկանայ իր ազատ կամքով, մինչև որ ժամանակին մի քահանայ էլ պակասելով վերջինիս, վերջապէս, որպէս չափաւոր ծուխ ունեցողի, կը յաջորդի ճեմարանաւարտ անձնաւորութիւն։

Մխական

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Պետերբուրգ, 20 մայիսի

Նախագահում է Ռօձեանկօն։

Շարունակվում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան նախահաշւի քննութիւնը։

Իշխան Գէլօվանին կանգ է առնում Կովկասի այլազգիների դպրոցի դրութեան վրայ։ Այդ դպրոցի դրութիւնը չէ փոխվել դէպի լաւը. վրաց լեզուն առաջվայ նման հալածվում է տարրական դպրոցներում։ Թիֆլիսում համալսարան բանալու հարցը մինիստրութիւնը թաղեց. Թիֆլիսի պօլիտեխնիկումի բացումը ձգձգվում է։ Ուկրայնում միևնոյն ռուսացման քաղաքականութիւնն է. մալօռոս ուսուցիչները հալածվում են։ Հիւսիս-Արևմտեան երկրում մինիստրութիւնը չէ կամենում բանալ համալսարան։

Կերէնսկին, առարկելով աջակողմեան Սվեատոպոլկ-Միրսկիին, գտնում է, որ ազատ ազգը, որ ինքն է տնօրինում իր կեանքը և հանդիսանում երկրի տէրը, կարող է զարգանալ։ Ժողովրդական լուսաւորութեան գլուխ կանգնածները, հասկանալով որ բարձր դպրոցը ոչնչացնել դեռ չէ նշանակում ոչնչացնել կուլտուրան, դեռ չէ նշանակում համատարած տգիտութիւն, այժմ արշաւանք են սկսել ժողովրդական ուսուցչի դէմ։ Այդ մարդկանց նպատակն է ստեղծել պայմաններ, որոնց մէջ ռուսական կուլտուրայի նոր բարգաւաճումը անհնարին լինի ազգայնականութեան սարսափի խաւարում (ծափահարութիւն ձախից)։

Երկար բացատրութիւններ է տալիս արված նկատողութիւնների դէմ ժող. լուս. մինիստրի օգնականը, որի ճառի ժամանակ տեղի է ունենում փոքրիկ միջադէպ, երբ մինիստրը, խօսելով դեռ չը քննված օրինագծերի մասին, նկատեց՝ «Համալսարանական նոր կազմերի օրինագիծը կօգնէ հերթին, եթէ, [illegible] ոճով [illegible] տեղից կը շարժվի»։

Բողոքներ ձախից՝ «Այդ ինչ դարձուածքներ են»։

Նախագահ. «Խնդրում եմ հանգստանալ, ես չեմ կարող կանգնեցնել կառավարութեան ներկայացուցչին, բայց ձեզ ես պարտաւոր եմ կարգի հրաւիրել»։

Մինիստրի օգնականը. «Շատ ցաւում եմ, որ դուք իմ խօսքերում ինչ որ խիստ բան նկատեցիք»։

Ձայներ ձախից՝ «Խնդրեցէք ներողութիւն»։

«Պատրաստ եմ ներողութիւն խնդրելու», ասում է մինիստրի օգնականը։

Այս միջադէպից յետոյ Միլիւկովը անում է արտակարգ յայտարարութիւն։ Նա պրեզիդիումի ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ առանձին պատգամաւորներ քանիցս հրէայ ազգին վիրաւորանքներ հասցրին «ջհուդ», «ջհուդի տեղ» դարձուածքներով, մասնաւորապէս մատնանշում է Զամըսլօվսկիի բացագանչութեան վրա հրէայ ժողովրդի ներկայացուցչի հասցէին, որ խօսեց ամբիոնից մայիսի 13-ին։

Նախագահող Վարուն-Սեկրէտը համաձայն է Միլիւկովի հետ, որ թոյլատրելի չէ ամբիոնից վիրաւորել մի ժողովրդի, որ իր մէջ 10 միլիոն հպատակ ունի Նորին Մեծութեան, և խնդրում է Դումայի անդամներին չը գործածել խիստ դարձուածքներ. (ծափ. ձախից և կենտրոնում)։

Զամըսլօվսկին պատասխանում է, որ «ջհուդ» խօսքը գործ է ածվում Պուշկինի, Գոգոլի, Դոստոեվսկիի և ուրիշ գրողների գրուածքների մէջ. իսկ ինչ վերաբերում է Միլիւկովի ցուցմունքին, Ֆրիդմանին վիրաւորական դարձուածքի առիթ տուեց ինքը Ֆրիդմանը, որ Զամըսլօվսկիի ընկեր ուսանող Գոլուբևին անուանեց ջարդարար։

Դուման ձեռնարկում է նախագահի օգնականի ընտրութեան։ Առաջադիմականները, սահմ.-ռամկավարները, սօց.-դեմոկրատները և աշխատաւորականները հրաժարվում են ընտրութիւններին մասնակցելուց։ Եֆրեմովը առաջադիմականների անունից կարդում է պատճառաբանեալ յայտարարութիւն, որ պաշտպանում է Միլիւկովը, թէ մերժումը պայմանաւորվում է նրանով, որ կառավարութիւնը ներկայումս կասկածի է ենթարկել պատգամաւորական խօսքի ազատութեան հարցը։

Թերթիկներ տալիս Կօնօվալօվը ստանում է 98 ձայն։

Պրոտոպօպօվը համաձայնում է քուէարկվել և գնդակներով քուէարկվելիս ընտրվում է 203 ձայնով ընդդէմ 11-ի։

Կարդացվում է յայտարարութիւն այն մասին, որ Դումայի նախագահ Ռօձեանկօն, նախագահի օգնական Վարուն-Սեկրէտը և աւագ քարտուղար Րժեվսկին հրաժարվում են իրանց պարտականութիւններից:

Պրեզիդիումի ընտրութիւնը նշանակված է վաղը: (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Кавказъ»-ին հեռագրում են, որ Թագաւոր կայսրը բարեհաճել է այցելել Ալուպկայում Կովկասի փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին և կոմսուհուն:

◆ Արդէն կազմված է Թիֆլիսի արհեստաւորների ապագայ հասարակական տան յատակագիծը: Տունը կրելու է փոխարքայ Վորոնցով-Դաշկովի անունը: Տունը լինելու է երկյարկանի: Առաջին յարկում լինելու է արհեստաւորների վարչութեան դիւանատունը և բուֆէտ: Երկրորդ յարկում արհեստաւորների վարչութիւնը, գրադարան ընթերցարան, երկու դասատուն, մէկը՝ թւաբանութեան և ռուսաց լեզուի համար, միւսը՝ գծագրութեան և նկարչութեան. այնտեղ են լինելու և դահլիճը և արհեստաւորների ասագի կաբինէտը:

◆ Թիֆլիսում կազմակերպվել է տպագրական գործի մի ընկերութիւն 95,000 ր. դրամագլխով: Ընկերութիւնը հիմնված է փայերի վրա, որոնց թիւը հասնում է 38-ի. իւրաքանչիւր փայ դրամագլխի մէջ դրել է 2500 ր.: Ընկերութիւնը նպատակ ունի հրատարակել գրքեր, լրագիրներ և ամսաթերթեր: Ընկերութեան կազմի մէջ մտնում են երդ.-հաւատ. Ի. Մ. Դոլուխանեան, Թիֆլիսի առևտրական բանկի նախկին կառավարիչ Կ. Մ. Ալիխանեան, բորսային կոմիտէտի նախագահ Ա. Ն. Միլեան Ի. Ա. Մանթաշեան, Աւան-Իւզբաշեան, տպարանատէր Մարտիրոսեան, տնատէր Ս. Մ. Նունուֆարեան, Օհանեան և ուրիշները:

◆ Մեզ հաղորդում են, որ մայիսի 18-ին Թիֆլիսի Թանգոյեան եկեղեցու միաձայն և բացարձակ քուէարկութեամբ երէցփոխ է ընտրվել Ռստոմ Տէր-Կարապետեանը, իսկ ձայների ճնշող մեծամասնութեամբ եկեղեցու և դպրոցի հոգաբարձուներ են ընտրվել Յարութիւն ք. Ծուղուրեանն ու Յովհաննեան դպրոցի ուսուցիչ Նիկողայոս Սարգսեանը:

◆ Թիֆլիս է եկել Ի. Մ. Րաչեցկի, որը մի շարք դասախօսութիւններ է կարդալու գրականութեան և գիտութեան մասին: Րաչեցկին յայտնի է՝ որպէս երեխաներին խնամող ընկերութիւնների կազմակերպող: Ինչպէս ասում են, նա մօտ 117 այդպիսի ընկերութիւններ է կազմել Ռուսաստանում:

◆ Ամառային արձակուրդների պատճառով, Թիֆլիս են գալու աշակերտական խմբերի էքսկուրսիաներ Մոսկվայից, Իւրեվից, Կովնոյից, Պենզայից և Ռուսաստանի այլ քաղաքներից:

◆ Նորերս կազմված պտղարդիւնաբերողների ընկ. վարչութիւնը այս օրերս սկսելու է իր գործունէութիւնը: Նորակազմ ընկ. առաջին նիստը կը կայանայ շաբաթ օրը, ապրիլի 24-ին, Կովկ. Կայսեր. Գիւղ. Ընկ. շէնքում:

◆ Մէշչանների ընկ. 1-ին և 3-րդ րայոնի լիազօրներ ընտրողները բողոքել են այդ րայոնների լիազօրների ընտրութեան դէմ:

◆ Տ. Մ. Փիլոյեանի առևտրական գիտութիւնների և օտար լեզուների կուրսերում քննութիւնները վերջացել են: Ընթացիկ տարում կուրսերի բոլոր բաժանմունքներում եղել են 334 հոգի, դրանցից 67-ը ունկնդրուհի: Առևտրական բաժանմունքի դասընթացը վերջացրել են 195 հոգի, որոնցից ռուսներ՝ 33, վրացիներ՝ 30, հայեր՝ 114 և ուրիշ ազգութիւնների պատկանողներ՝ 18:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետերբուրգում կանանց իրաւահաւասարութեան լիգան նախագծել է հիմնել կանանց բանկ, ուր տղամարդիկ պաշտօնավարելու չեն:

◆ Լիվադիա են մեկնում կրկին ներքին գործերի և ժողովրդ. լուս. մինիստրներ Կասսօն և Մակլակովը:

◆ Պարիզից հեռագրում են, որ «Temps» տեղեկութիւն է ստացել, որ կոմս Վիտտէն այս օրերս ստանալու է կարևոր կառավարական պաշտօն:

◆ «Р. Сл.»-ի Պետերբուրգի թղթակիցը հեռագրում է, որ Պուրիշկևիչի առաջարկութեամբ Մոսկվայի «սօյուզնիկ» Վ. Օրլովը այս օրերս Միքայէլ Հրեշտակապետի միութեան գլխաւոր պալատի կողմից մեկնելու է Կովկաս՝ քննելու կովկասեան նահանգապետների և գլխաւորապէս Կովկասի փոխարքայի օգնական Պետերսոնի գործունէութիւնը:

◆ Բաթումից էտապով Նարիմի շրջանն է աքսորվել 2-րդ Պետական Դումայի անդամ Կ. Կանդէլակին:

◆ «Н. В.» ստոյգ աղբիւրից տեղեկացնում է, որ ֆինանսների մինիստրի օգնականներ նշանակվում են Վ. Կուզմինսկին և Նիկոլայենկօն: Մինիստրի երրորդ օգնականի պաշտօնը շարունակում է վարել Ն. Պօկրօվսկին:

◆ «Н. В.»-ի ասելով, Մոսկվայի միտրոպոլիտ Մակարին ձեռնարկելու է այս ամառ ճանապարհորդութեան դէպի Սիբիր, Ալտայ, ուր նա պաշտօնավարելիս կարողացել է իր ջերմ քարոզներով քրիստոնէական հաւատի դարձնել 60,000 այլադէնների:

◆ Առանձին մասնաժողով է հաստատված Պետերբուրգում Արխանգէլի նահանգի ապագայ զեմստվային կանոնադրութիւնը մշակելու համար:

◆ Պետերբուրգում խօսում են, որ շշուկներ կան Պետական Դուման արձակելու մասին:

◆ Մաքսիմ Գօրկին լրագիրներում հերքում է այն տեղեկութիւնը, թէ իր թոքախտը բժ. Մանուխինի բժշկութիւնից յետոյ իբր վերանորոգվել է:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Ներկայիս Շվէյցարիայում է գտնըվում առաջին Պետական Դումայի անդամ և վրաց յայտնի հրապարակախօս Նոյ Ժորդանիան, որ այնտեղի սանատօրիայում բժշկվում է հիւանդութիւնից: Ի նկատի ունենալով Ժորդանիայի նիւթապէս անապահով լինելը, վրաց «Թեմի» շաբաթաթերթը ասում է. «Ահա թէ որտեղ էր անհրաժեշտ վրացի ժուռնալիստների նպաստամատոյց ընկերութիւնը, եթէ նա հիմնված լինէր: Մեր մամուլը պարտաւոր է, առանց ուղղութեան խտրութեան, այս մասին հոգացողութիւն ունենալ»:

◆ Յայտնի բելլետրիստ Եգն. Նինօշվիլիի մահվան 20 տարին լրանալու առիթով վրաց ժողովրդի բոլոր խաւերում կատարվում են հոգեհանգիստներ և կազմակերպվում հանգուցեալ գրողի անուանը նուիրված գրական-երաժշտական ցերեկոյթներ:

◆ Վրաց թատրոնական գործիչների առաջին համագումարը կը բացվի մայիսի 25-ին Վրաց թատրոնում:

◆ Ժողովրդական համալսարանի ընկ. վրաց սեկցիայի նախաձեռնութեամբ ընկ. անդամներից կազմված էքսկուրսանտների մի խումբ, 80 հոգուց բաղկացած, Համբարձման օրը այցելեց Մցխէթ՝ այնտեղի նշանաւոր հնութիւնները դիտելու: Բացատրութիւններ տալիս էր պրօֆ. Ի. Ջաւախաշվիլին:

◆ Մոտակայ Մարտոփ գիւղում Վրաց Գիւղատնտեսական Ընկ. նախաձեռնութեամբ հիմնվել է րայօնական կոմիտէտ, որը գիւղացիների մէջ պէտք է տարածէ գիւղատնտեսական զանազան գործիքներ և օգնէ նրանց անհրաժեշտ խորհուրդներով ու գործնական խրատներով:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿ. ՀԱՒԱՔՈՅԹԸ

Տակաւին նոր՝ Թիֆլիսի Հայ Երաժշտական Ընկերութիւնը հայ հասարակութեան հետ կապ է պահպանում առ այժմ երաժշտական հաւաքոյթների միջոցով:

Այդպիսին տեղի ունեցաւ մայիսի 20-ին Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում:

Անցեալ տարի Ընկ. տուած երեկոյթը նկատվեց աւելի օտար բնոյթ կրող, քան հայկական, ինչպէս հարկ էր սպասել: Այս անգամ արդէն յիշեալ հաւաքոյթին տրված էր հայկական կոլորիտ:

Համերգ-երեկոյթը բացվեց «Բայլերգով» Մ. Միրզայեանի ղեկավարութեամբ, որից յետոյ հանդէս եկաւ Ընկ. վարչութեան նախագահ ազատ արուեստագէտ Յ. Տէր-Դաւթեան իր «Ներդաշնակութիւնը ընդհանուր առմամբ» բանախօսութեամբ, որ նա նուիրեց, ինչպէս ինքը ասաց, «ներդաշնակութեան Թագաւոր» հանգուցեալ Մ. Եկմալեանի յիշատակին:

Իր բանախօսութեամբ ստեղծելով աւդիտօրիայում ուրախ տրամադրութիւն, շնորհիւ իր բերած զաւեշտական օրինակների, Տէր-Դաւթեան բացատրեց առ հասարակ ներդաշնակութեան նշանակութիւնը և ապա կանգ առաւ հայ եկեղեցական-հոգևոր, ժողովրդական և անհատական-ստեղծագործական երաժշտութեան վրա: Ընդգծելով որ յանձին Մ. Եկմալեանի հայ հոգևոր երաժշտութիւնը իր շատ պատուաւոր տեղն է գրաւում միւս ազգերի շարքում, բանախօսը յայտնեց, որ մենք ներկայումս գտնվում ենք ժողովրդական երաժշտութեան նախօրեակին և միայն ապագայում երազելու ենք անհատական-ստեղծագործական երաժշտութիւն:

Այնուհետև նա, շեշտելով հայ հասարակութեան անտարբեր վերաբերմունքը դէպի մայրենի երաժշտութեան զարգացումը, յորդորեց անդամագրվել Հայ Երաժշտական Ընկերութեան:

Դրանից յետոյ երիտասարդ Ս. Բարխուդարեան դաշնամուրի վրա նուագեց իր սեփական «Էսքիզները», արժանանալով ջերմ հաւանութեան ներկայ եղողների կողմից: Երիտասարդ երաժշտի մէջ կան, անպայման, ձիրք ու կատարելագործվելու աներկբայ տւեալներ:

Ա. Տիգրանեանի երգից յետոյ, խումբը Սպ. Մելիքեանի ղեկավարութեամբ երգեց Կոմիտաս վարդապետի «Լօրիկը»:

Երկրորդ բաժնում խումբը երգեց Ռ. Մամաջանեանի ղեկավարութեամբ: Տէր-Դաւթեան իրան յատուկ աջողութեամբ նուագեց Բարխուդարեանի «Աբեղեան պարը»: Դէմիրճեանը ջութակի վրա նուագեց «Դլօ» և այլ պարեր, իսկ Սպ. Մելիքեան երգեց «Մոկաց Միրզա» ժողովրդական երգը:

Ընդհանուր տպաւորութիւնը նպաստաւոր էր հաւաքոյթից, միայն մենք չենք կարող չը նկատել նրա կազմակերպողներին՝ ծրագրում նշանակված ժամանակից ուղիղ մի ժամ ուշ սկսելու համար: Ես

ՄԱՏԵԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հանրամատչելի բժշկարան. բժշկապետ Մ. Րէստէնի բժշկարանից ծաղկաքաղեց Դր. ա. ք. Մանդակունի: Տպ. Եսայեանցի 1914 թ.:

Այս գիրքը բաղկացած է 140 էջերից, գինն է 1 րուբլի: Հայր Մանդակունու այս ծաղկաքաղը, որ արել է բժ. Րէստէնից, բաւականին հետաքրքրական գործ է: Ինչպէս ինքն է արտայայտվում իր առաջաբանում, «աշխատել մի ծառայութիւն անել, որ մինչև բժշկի օգնութեան դիմելը, հիւանդները իրանց ձեռքով պատրաստել կարողանան փրկարար դեղեր, իսկ չքաւորներն էլ թեթև ծախքով ազատվել կարողանան այդ դեղերի միջոցով», տէր հայրը, կարելի է ասել, հասել է նպատակին: Եւ իսկապէս, մարդ թերթելով այդ գրքի էջերը՝ մնում է զարմացած, երբ տեսնում է ծանօթ հասարակ խոտերն ու բոյսերը, թռչուններն ու կենդանիները, բզէզներն ու միջատները և բազմաթիւ այլ բաներ, որ ամէն օր տեսնում ենք, բուժիչ յատկութիւններ ունեն զանազան հիւանդութիւնների դէմ, բայց միայն անհրաժեշտ է գիտենալ գործածութեան ձևը: Եւ բժշկարանը թւելով այդ բոլոր բուժիչ յատկութիւն ունեցողների անունները՝ ցոյց է տալիս և գործածելու ձևը, որ կարող է իւրաքանչիւր գրաճանաչ պատրաստել գործածելու համար:

Այս բժշկարանը շատ յարմար է գիւղական հասարակութիւնների համար, ուր բըժիշկներ չը կան, երկրորդն էլ՝ զանազան փալչիների, այաների և դալլաքների տըգիտութեան և սպանիչ բժշկութեան առաջն առնել կարող է:

Ի հարկէ, զուտ գիտական և բժշկական տեսակէտից գիրքն ունի թերութիւններ, բայց ուրախալին այն է, որ այդ թերութիւններից ոչ ոք չի մահանայ կամ վնասվի, ինչպէս վերոյիշեալ դալլաքներից և փալչիներից վնասվում կամ մեռնում են հազարաւոր հիւանդներ:

Ցանկալի է սրա տարածումը ամէն մի ընտանիքում, նամանաւանդ գիւղական համայնքներում.

Սիւլլա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 մայիսի

Այս գիշեր մեկնում եմ Եւրոպա: Իմ ամառային արձակուրդը անցկացնելով այնտեղ, յուսով եմ, որ նոր ույժերով ու պաշարով կը վերադառնամ Կովկաս:

Խնդրում եմ թերթիդ սիւնակներում տեղ տալ իմ նամակին որով շնորհակալութիւն եմ յայտնում, այն ազնիւ ու շնորհալի վերաբերմունքի համար, որ գտել եմ Թիֆլիսի հայութիւնից:

Շնորհակալութիւն և նրանց, որոնք բարեհաճութիւնը ունեցան ընդառաջ գնալ իմ Եւրոպա գնալու մտքին:

Վահրամ Փափազեան

Թիֆլիս, 12 մայիսի

Ժողովարանում պատահած դէպքի (պ. Սմբատեանի և տ. Ալիխանեանի) մասին Ռ. Մանուկեանի գրած նամակը առաջ էր բերել մի թիւրիմացութիւն, որը պարզելու համար երկու կողմերը—տ. Ալիխանեան և պ. Մանուկեան—ընտրեցին միջնորդ դատարան, բաղկացած՝ պ. պ. Խոստիկեանից, Իշխանեանից, Մելոյեանից, Դաւթեանից և Թումանեանից: Մայիսի 12-ին կայացած նիստում դատարանը, քննելով թիւրիմացութիւնը, կայացրեց իր հետևեալ վճիռը.

Ի նկատի ունենալով պ. Մանուկեանի ցուցմունքները, որի համաձայն ժողովարանի սանդուղների վրա տեղի ունեցած իրարանցման և ընդհանուր աղմուկի ժամանակ («Նուէր Մանուկներին» ընկեր. ցերեկոյթին), երբ աշակերտները խռնված իջնում էին ներքև, կարող էր պատահել, որ այդ պայմաններում ուս. պ. Սմբատեանը խփած լինէր տ. Ալիխանեանի երեխային և որը կարող էր պ. Մանուկեանը նկատած չը լինել,—միջնորդ դատարանը միաձայն եկաւ հետևեալ եզրակացութեան. որ պ. Մանուկեանը «Մշակում» զետեղած իր նամակի մէջ անզգոյշ է արտայայտվել դէպքի մասին, որով տ. Ալիխանեանի հասցէին սուտեր է ձգված եղել, առանց սակայն որևէ դիտաւորութիւն ունենալու վիրաւորել նրան:

Ի դիմաց միջնորդ դատարանի անդամների՝
Նախագահ՝ Յ. Մ. Թումանեան

Ծանօթ. խմբ.—Երէկ մենք տպելով Ն. Աբրահամեանի նամակը և համարելով հարցը թիւրիմացութիւն, յայտնեցինք նրան փակված: Սակայն մենք ի նկատի չէինք ունեցել այդ առիթով կայացած մի միջնորդ դատարանի որոշումը, որը նոյնպէս պէտք էր նկատողութեան առնել: Տպելով այսօր այդ որոշումը, խնդիրը պէտք է վերջնականապէս փակված համարել:

Ղզվին, 10 մայիսի

«Մշակի» №№ 38-ում և 86-ում Ղզվինից գրված թղթակցութիւնների մէջ ասված է, թէ Ղզվինում մի հայ հարուստ բռնագրաւել է շահնշահներից նուիրված 4750 գազ ազգային գետինը, և միաժամանակ պարոն յօդուածագիրը մատնանշում է դօկումենտների վրա:

Որովհետև հոգաբարձութեանս ձեռքի տակ չը կայ որևէ դօկումենտ, որ ապացուցէ մի այդպիսի խնդիր, ուստի հոգաբարձութիւնս խնդրում է պարոն յօդուածագրից յանձնել մարմնիս այդ դօկումենտները, որպէսզի հնարաւորութիւն ունենանք ճըշդելու այդ հարցը և կամ ըստ յարմարութեան ընթացք տալու:

Հոգաբարձութեան անդամներ՝ Աւագ Յարութիւնեան, Առ. Գրիգորեան, Սմբ. Սաատուրեան.

Մեծ-Ղարաքիլիսա, 8 մայիսի

Թէև Երևանի սրբազան փոխ-թեմակալը Ղարաքիլիսայի դպրոցի շուրջը ստեղծված միջադէպի առիթով ամսիս 2-ին արձակեց իր բանաւոր վճիռը, որը միանգամայն նպաստաւոր չէ ուսուցչութեան գործելակերպի համար, բայց և այնպէս հոգաբարձական խորհուրդը լռութեամբ չէ կարող անցնել ուսուցչութեան ամբողջ կազմի այն նամակը, որ լոյս տեսաւ «Մշակի» 92-րդ համարում:

Նախ ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, թէ թոյլատրելի է արդեօք տակտի և կոռեկտութեան մասին ճառող ուսուցչութեանը լրագրութեան նիւթ դարձնել մի գրութիւն, որը նոյնիսկ գրված չէ եղել: Որ ուսուցչութիւնը դիմել է այդպիսի անկոռեկտ քայլի, դրան ապացոյց կարող է ծառայել հետևեալը:

Հոգաբարձական խորհուրդը, ստանալով ապրիլի 24-ին ուսուցչութեան յայտարարութիւնը, ապրիլի 25-ին արտակարգ ժողով հրաւիրեց, ուր մանրամասն քննելով այդ գրութիւնը՝ որոշեց պատասխանել: Պատասխանը գրվել է ապրիլի 26-ին, իսկ նոյն ամսի 27-ին ուղարկվել է ուսուցչութեան. ուրեմն վերջինը կարող էր ծանօթանալ հոգաբարձութեան գրութեան բովանդակութեան հետ միայն ապրիլի 27-ին: Պարզ է, որ ուսուցչութիւնը զարմանալի փոյթկոտութեամբ լրագրութեան նիւթ է դարձրել ըստ բովանդակութեան դեռ իրան անծանօթ մի գրութիւն և նրա շուրջը աղմուկ բարձրացրել (տես «Մշակի» №№ 91 և 92):

Այդ երևոյթը հոգեբանօրէն բացատրելի է, երբ մարդիկ անում են մի անթոյլատրելի քայլ և զգալով իրանց վարմունքի ամբողջ տգեղութիւնը՝ աշխատում են վաղօրօք աղմկել, որպէսզի, մթնեցնելով ճըշմարտութիւնը և բևեռելով հասարակութեան ուշադրութիւնը հակառակորդի վրա, աւելի հեշտութեամբ կարողանան խոյս տալ բարոյական պատասխանատուութիւնից:

Ապա գալով վերև յիշած նամակին, պէտք է ասել, որ ուսուցչութիւնը այդ նամակում իրան մի փառաւոր ատեստացիա տալուց և դպրոցական ներքին համերաշխ կեանքի մասին խօսելուց յետոյ (մոռանալով, ի հարկէ, անցեալ տարւայ մի քանի ուսուցիչների ամօթալի դասադուլը հակառակ իրանց ընկերների ցանկութեան)՝ անցնում է վերագրել հոգաբարձութեան այն քայլը, որին հէնց ինքը ուսուցչութիւնը դիմեց, ձգտելով տապալել 60 տարի պատկառելի գոյութիւն ունեցող դպրոցը իր անհանդուրժելի գործելակերպով, որ հանդիպեց հոգաբարձութեան միահամուռ ընդդիմադրութեան և պատշաճ պարսաւանքին:

Ուսուցչութեան կողմից հոգաբարձութեանը ուղղված յայտարարութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ուլտիմատում, որտեղ մի շարք ածականներից յետոյ ուսուցչութիւնը առաջարկում է կամ դպրոցը փակել և «ազատել իր ույժերն արգելքից», կամ ռոճիկ վճարել:

Եւ այդ արվում է առանց խղճի խայթ զգալու իրան դպրոցի բարեկամ յորջորջող ուսուցչութեան կողմից այն ժամանակ, երբ մի ամիս ու կէս էր մնում մինչև ուսումնական տարւոյն վերջանալը և ուսուցչութիւնը ունէր ստանալու միայն մարտ ամսւայ ռոճիկի մի մասը, որի վճարումը յապաղում էր շնորհիւ մի քանի ձախորդ հանգամանքների. իսկ պ. աւագ-ուսուցիչը ոչ թէ միայն բաւարարված էր իրան հասանելիք ռոճիկով, այլ և հոգաբարձութեան երաշխաւորութեամբ ստացել էր ամառւայ ռոճիկը:

Ուշագրաւ և ապշեցուցիչ է այն հանգամանքը, որ ուսուցչութիւնը, իրազեկ լինելով որ հոգաբարձութիւնը օրէ-ցօր սպասում էր փոխ-թեմակալին ուղղած իր գրութեան պատասխանին, որով խնդիր էր յարուցված վիճակային կամ թեմական արդիւնքներից 1000 րուբլի փոխառութիւն կնքելու մասին, և համբերութեամբ տանելով, ինչպէս ինքը գրում է, «այդ կացութիւնը» ամիսներ (թէև մարտ ամսւայ ռոճիկի մի մասը չէր տըրված), յանկարծ դեմօնստրատիւ կերպով դիմում է անհանդուրժելի քայլի, կոչ անելով հոգաբարձութեան «քաղաքացիական քաջութեան փորձադաշտին» և հրաւիրելով նրան փակել դպրոցը, որի գոյութիւնը ուսուցիչների համար հէնց իրանց իսկական տեսակէտից անհրաժեշտ է: Թէ որքան վարչական և մանկավարժական իմաստ կար ուսուցչութեան այդ վարմունքի մէջ, թողնում ենք դատել գիտակից հասարակութեան:

Այդ դէպքից յետոյ հոգաբարձութիւնը մեծ դժուարութեամբ կարողացաւ գտնել հարկաւոր գումար և գանձապահին առաջարկեց լրացնել ուսուցիչների մարտ ամսւայ ռոճիկը: Գանձապահը, գալով դպրոց, հրաւիրեց ուսուցիչներին ստանալ իրանց հասանելիք ռոճիկը. այստեղ էլ ուսուցչութիւնը դիմեց անիմաստ քայլի, այն է հրաժարվեց ստանալ մարտ ամսւայ ռոճիկը: Նոյնիսկ ուսուցիչներից մի քանիսը արտայայտեցին կուլտուրական մարդուն ոչ յատուկ վարվեցողութիւն, անվայել խօսքերով վիրաւորանք հասցնելով գանձապահին: Թուցէ այդ էլ մանկավարժական միջոցներից մէկն է, որը կիրառվեց նոյնպէս և գանձապահի վերաբերմամբ:

Սակայն ամէն մի երևոյթ պէտք է ունենայ իր պատճառը. ուստի ուսուցչութիւնը, որպէսզի կարողանայ պատճառաբանել և արդարացնել հասարակութեան առաջ իր անբացատրելի գործելակերպը, սկսում է վառ կերպով նկարագրել հիւանդների տանջանքը, երեխաների մերկութիւնը և ցամաք հաց խնդրող ընտանիքի աղերսը, որոնք իբր թէ մղել են նրանց դէպի այդ աններելի քայլը: Դա չափազանցրած և խտացած գոյներով նկարագրված պատկեր է, որը շատ հեռու է իրականութիւնից: Ուսուցիչներից լուրջ կերպով հիւանդացել էր մէկը, որը ամէն ամիս բաւարարվում էր ռոճիկով. իսկ ուսուցիչներից միայն հինգն են ընտանիքաւոր, որոնց երեխաները, որքան յայտնի է, մերկ չեն: Իսկ ցամաք հաց խնդրող ընտանիքի աղերսը՝ դա առասպել չէ արդեօք, որը գրվել է տպաւորութիւն գործելու համար:

Գալով ուսուցչութեան յայտնած կարծիքին, թէ հոգաբարձական նոր կազմի գործունէութեան հէնց առաջին քայլերը չարդարացրին նրա մեծ յոյսերը, պէտք է ասել, որ այս նամակի շրջանակից դուրս է մանրամասն գրել դրա մասին, բայց հասարակ բարեխղճութիւնը պէտք է թելադրէր եթէ ոչ ուսուցչութեանը, գոնէ աւ.-ուսուցչին, իբրև նախկին քարտուղարի, որը իրազեկ է հոգաբարձութեան գործերին, չը գրել այնպիսի տողեր, որոնց իմաստից զուրկ լինելը ակներև է: Հոգաբարձութիւնը դիմում է այդ «հեռատես ֆինանսիստներ» ուսուցիչներին և հարց է տալիս, թէ արդեօք ինչպէս կարող էր նոր հոգաբարձութիւնը հէնց առաջին քայլից և ամենակարճ ժամանակի ընթացքում բաւարար կերպով լուծել մի խրոնիքական ցաւ դարձած հարց այն ժամանակ, երբ նոր հոգաբարձութիւնը ժառանգութիւն ստացաւ դեֆիցիտով դրամարկղ և խճճված դրամական գործեր, իսկ եկեղեցուն պատկանող մուրհակները այնպիսի անկանոն դրութեան մէջ էին, որ նոր հոգաբարձութիւնը նոյն իսկ հրաժարվեց ստանալ մուրհակները մինչև նրանց կարգաւորումը նախկին երէցփոխի կողմից:

Այդ բոլորը շատ լաւ յայտնի է աւ.-ուսուցչին, բայց դա, ալեկոծված կրքերով, որոնք մթնեցնում են բանականութիւնը, այսօր ժխտում է այն, թէ հոգաբարձութիւնը որքան աշխատանք է գործադրել, հէնց իրա աւ.-ուսուցչի մասնակցութեամբ, ժառանգութիւն ստացած խառնափնթոր գործերը և խճճված դրամական հաշիւները պարզելու և կարգաւորելու համար:

Հիմա հոգաբարձութիւնը իր հերթին հարց է տալիս «կրթութիւն և լոյս» տարածող 14 ուսուցիչներին. Ո՞ւր էր ուզում մղել դըպրոցական գործը ուսուցչութիւնը, առաջարկելով հոգաբարձութեան փակել դպրոցը, այսինքն տապալել մի հիմնարկութիւն, որը 60 տարի շարունակ լուսատու փարոս է հանդիսացել շրջապատող խաւարի մէջ և որի բարգաւաճման և բարեփոխութեան համար «ծով էներգիա» է թափվել:

Նախագահ խորհրդի՝
Բժ. Ա. Վարդանեան
Անդամներ՝ Սամսոն Լորեան
Գ. Նալբանդեան
Ա. Աղաբաբեան
Ա. Մխիթարեան

Սաղիան (Շամախու գաւ.), 10 մայիսի

Համագիւղացիներիս և ընկեր-ուսուցիչներիս հաճելի եղաւ 40-ամեայ ուսուցչութեանս յօբելեանը կատարել Սաղիանի ինձ յանձնված Բուդաղեան-Վանական երկդասեան դպրոցում լրացած ապրիլի 20-ին:

Այդօրինակ տօնախմբութիւնը որքան էլ սազական չէր ներքին աշխարհիս, հոգեկան վշտերով լի սրտիս, այնու հանդերձ՝ յարգելով ինձ յարգողներին՝ ընդունեցի՝ ոչ այնքան ուսուցչութեանս բազմամեայութիւնը նկատի առնելով, որքան համագիւղացիներիս կուլտուրական առաջադիմութիւնից բղխած բուռն ցանկութիւնը գուրգուրելով...

Այո, ասացի, թող ծննդավայրումս և տեղի ունենայ այդպիսի—մեր կողմերում չը տեսնված—մի հանդէս, որը վշտաբեկիս մխիթարութիւն պատճառելով հանդերձ՝ խրախոյս կը հանդիսանայ երկսեռ պաշտօնակիցներիս՝ ուր էլ լինեն, կը բարձրացնէ ծննդավայրիս հեղինակութիւնը հասարակական գիտակցութեան հասունութիւն ներկայացնելով իրանից և, մանաւանդ, յոյժ կրթիչ ու դաստիարակիչ ազդեցութիւն կունենայ մատաղ սերնդի հոգեկանի ու բարոյականի վրա...

Բարձր գնահատելով ահա այդ ամենը և խորը զգացված իրախուսական ջերմ վերաբերմունքից, խորին շնորհակալութիւններս եմ յայտնում Թեմիս սրբազան առաջնորդին, Սաղիանի յօբելեանական մասնաժողովի և Բագուի ենթամասնաժողովի պ. պ. անդամներին, Թիֆլիսի և Բագուի հայ և ռուս թերթերի խմբագրութիւններին, մի խումբ յարգելի հայ կանանց, Շամախու, Մաղրասայի, Քերքենջի և Մէյսարի թեմական, ծխական, հայ-աւետարանական և ռուս-թուրքական դպրոցներին ու նրանց ուսուցիչներին, Բագուի հայոց դպրոցների հոգաբարձութեան, Շամախի ու Բագուի քաղաքների խմբով յարգողներիս, Չարխու գիւղի հայ հասարակութեան, բագուաբնակ հայրենակիցներիս, նախկին և այժմեան աշ.-աշակերտուհիներիս, միջնակարգ և բարձրագոյն դպրոցների ինձ յարգող ուսանողներին և, առ հասարակ, այն բոլոր հոգևոր ու աշխարհական անձանց և բարեմիտ հիմնարկութիւններին, որոնք կամ անձամբ կամ պատգամաւորների միջոցով և կամ հեռագիրներով, լրագիրներով, ուղերձներով և նուէրներով պատւեցին յօբելեանիս հանդէսը՝ այնքան ջերմ ու սրտառուչ արտայայտութիւններով: Սրտաբուղխ շնորհակալութիւնս նաև ծննդավայրիս Բուդաղեան դպրոցին բարերարող Բուդաղեան տանը, ուսուցիչ-ընկերներիս և Սաղիան գիւղի երկսեռ հասարակութեան՝ քահանայով, տանուտէրով, այլ պաշտօնատար անձերով և ընտրելագոյն երիտասարդութեամբ հանդերձ: Ցանկանում եմ դրանց ամենքին երկու 40-ամեակ և էլ աւելի գործելու կեանք, եռանդ և աջողութիւն:

«Ծարաւը» իւրաքանչիւրին:

Մկրտիչ Ախթարէկեան

ՋՐՄԵՂ ՄԻ՛ ՋՆՋԱՆՔ

Տեղական մի թերթ, որի անունը դուք այլևս չէք յիշատակում «Մշակում», մայիսի 20-ին չըմեղ ձևանալով և իր Մեծարոյ եպիսկոպոսին էլ չըմեղացնելով, յայտարարում է թէ՝ «...ծանօթանալով այն ընտրական հրահանգին, որով հայկաբրաբար պէտք է ղեկավարվէր Թեմիս առաջնորդը, մենք ոչ մի տեղ չը գտանք ցուցմունք այն մասին, թէ նա մի շաբաթ առաջ պէտք է յայտարարէր ժողովի մասին: Եթէ այս այսպէս է, ապա հասկանալի է, որ հոգևոր բարձր իշխանութեան կարգադրութիւնը գոյութիւն ունեցող ընտրական հրահանգից չէ բղխում, այլ սովորական քմահաճութեան արդիւնք է հանդիսանում»:

Վեհափառ Հայրապետի կարգադրութիւնը քմահաճութիւն անուանող թերթի ղեկավարներին խորհուրդ ենք տալիս գէթ ձգել իրանց կոտրած անկողինները և [illegible] ճրագները և, լոյս աշխարհ դուրս գալով, կարդալ ներկայումս գոյութիւն ունեցող «Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցու ծխական կանոնադրութեան» հետեւեալ կէտերը.

«Յօդ. 17.—Միական ժողովի իրաւունքն է (ժԲ.) պատգամաւորներ, ներկայացուցիչներ և նրանց փոխանորդներ ընտրելը ծխական համայնքի կողմից ուրիշ պատգամաւորական (օրինակ՝ Թեմական) ժողովների և այլ զանազան եկեղեցական գործառնութեանց մասնակցելու համար»։ «Յօդ. 19.—Ժողովի հրաւէրը կատարվում է գրաւոր հրաւիրաթղթով, պահանջվում է նաև բանաւոր ծանուցումն եկեղեցում. հրաւիրաթուղթն ուղարկվում է եկեղեցու բոլոր իրաւատուներին, իսկ մի մի օրինակ կախ է տրվում (առնուազն մի շաբաթ) եկեղեցու պատի վրա»։

Ուրեմն ինչ է դուրս գալիս. դուրս է գալիս, որ բողոքաւոր վաճառականներն աւելի են տեղեակ մեր եկեղեցական-ծխական կանոնադրութեանը, քան թէ մեր անտեղի հարայչիները, թէև վաճառականների սխալն էլ այն է, որ Մեսրոպ եպիսկոպոսը ոչ թէ 7 օր առաջ պիտի յայտարարէր Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան պատգամաւորների ընտրութիւնը, այլ, ինչպէս տեսնում ենք վերոյիշեալ կանոնադրութեան 19-րդ յօդուածում, «առնուազն մի շաբաթ» առաջ դեռ պիտի յայտարարէին Մեսրոպ եպիսկոպոսից պատուէր և հրահանգ ստացող քահանաներն ու աւագ-երէցները։ Ուրեմն դուրս է գալիս նոյնպէս, որ ոչ թէ Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրութիւնն է «քմահաճութեան արդիւնք հանդիսանում», այլ Մեսրոպ եպիսկոպոսի կարգադրութիւնը, որ պիտի բղխէր ընդհանուր կանոնից և կանոնադրութիւնից։ Հ. Ց.

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Բօլնիս-Խաչէն գիւղ, 13 մայիսի

Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում բագուաբնակ այն մի խումբ նուիրատուներին, որոնք այս տարի մի օրինակ «Մշակ» են նուիրել Բօլնիս-Խաչէն գիւղի «Աղայեան» գր.-ընթերցարանին։

Ի դիմաց գր.-ընթ. վարչութեան՝
Ղազար Ղազարեան

—

Վաղարշապատ, 18 մայիսի

Մօսկովաբնակ Յարութիւն Բաղդասարեանը տեղիս ս. Շողակաթ եկեղեցուն նուիրել է արծաթեայ ոսկեզօծ մի սկիհ, որի մասին յայտնում եմ իմ և իմ ծխականների կողմից խորին շնորհակալութիւն։

Վաղարշապատի ս. Շողակաթ եկեղեցու
ծխատէր՝ Վահան ք. Աղազաղեան

—

Հաղբութ, 20 ապրիլի

Ստացված է յօգուտ Հաղբութի հայոց եկ.-ծխ. դպրոցի շինութեան՝ Թէջէնից եղբ. Կոստանեաններից 133 ր.։ Ղարաբաղից Իվ. Հայրապետեանի միջոցով՝ Պ. Սողոմոնեանից 1 ր., Ի. Հայրապետեանից 10 ր., Ա. Ազիզովից, տ. Հ. Հայրապետեանից 5-ական ր., Փ. Ազիզովից, Կ. Տէր-Ղազարեանից 3-ական ր., Պ. Գաբրիէլովից, Վ. Անջանիձէից, Լ. Մարգարօվից, Գ. Միրզայեանից 2-ական ր.։ Անդիժանից՝ Ց. Նարինեանի միջոցով՝ Ց. Նարինեանից 50 ր., Մ. Աբալեանից 25 ր., Մ. Միրզայեանից 20 ր., Թ. Գրիգորեանից, Լ. Ստեփանեանից, Մ. Տէր-Օհանեանից, Բ. և Ս. Բաղդասարեաններից, Գ. Թումանեանից, Ն. Աւագեանից 10-ական ր., Ա. Անանեանից, Գ. Միրզայեանից, Մ. Յակոբեանից, Ա. Սուլէյմանեանից 5-ական ր.։ Մերվից՝ Ն. Ասրեանի միջոցով՝ Ս. Բարաթեանից և Մ. Խուբլարեանից 30-ական ր., Հ. Իշխանեանից՝ 25 ր., Խ. Աբալեանից 20 ր., Խ. Սահակեանից 15 ր., Ս. Տէր-Օհանեանից և Ս. Ասաթեանից 10-ական ր., Ց. Մովսիսեանից, Բ. Ասլանեանից, Ձ. Առաքելեանից և Մ. Ղասումեանից՝ 5-ական ր., Ջ. Հարունեանից, Դ. Մելիք-Մկրտչեանից, Բ. Հայրապետեանից 3-ական ր.։ Չարջույից՝ Մ. Բարաթեանից 200 ր., Ա. Շահնազարեանի միջոցով՝ Ա. Ենգիբարեանից, Ա. Շահնազարեանից՝ 5-ական ր., Ա. Յովսէփեանից և Պ. Յակոբջանեանից՝ 4-ական ր., Բ. Յովսէփեանից 3 ր., անյայտից, եւ անյայտից, Ա. Յարութիւնեանից, Մ. Արղումանեանից 1-ական ր.։

Ընդամենը՝ 740 ր., նախկին ստացվածների հետ միասին՝ 3618 ր. 40 կ., որից մինչև օրս ծախսված է 2894 ր. 65 կոպ.։

Բոլոր նուիրատուներին յայտնվում է խորին շնորհակալութիւն։

Շինութեան յանձնաժ. նախագահ՝
Ստ. Ստեփանեան
Անդամ-քարտուղար՝
Ց. Տէր-Գասպարեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Ուստր, 15 մայիս (ն. տ.)

Արտագաղթի հոսանքը, որ վերջին տարիները սուր կերպարանք ստացած և մեծ համեմատութիւններ առնել սկսած էր Թիւրքահայերուն մէջ, տակաւին կը շարունակուի միևնոյն թափովը և թերևս քիչ մըն ալ աւելի չեշտուած։ Թիւրքահայոց այս քրոնիկ հիւանդութիւնը վարակած կը թուի ըլլալ և մեր կովկասահայ եղբայրները, մասնաւորապէս Կարսի և Ալէքսանդրօպօլի շրջանի հայութեան գիւղացի դասակարգը, որոնք առասպելներու աշխարհին առասպելական հարստութիւններուն տիրանալու ցնորական գաղափարով տոգորուած՝ տուն տեղ, ընտանիք և զաւակներ ձգած կուգան Ամերիկա, ուր իրենց երևակայած երազած կեանքի փոխարէն թշուառութիւնն ու յուսահատութիւնը կը դիմաւորէ զիրենք գրկաբաց։

Ամերիկայի գաղթային պաշտօնական տեղեկագրէն կը տեսնուի, որ 1913 թ. յուլիս ամիսէն մինչև դեկտ. 31 (վեց ամիս) Ամերիկա հասած են մօտաւորապէս 7000 հայեր։ Եթէ արտագաղթը այս ընթացքով շարունակուի, քիչ ժամանակէն Հայաստանը արդէն պարպուած կըլլայ։

Ամերիկա հասնող այս գաղթականներէն մաս մը արդէն ետ վերադարձուած են գաղթային օրէնքի խստութեան պատճառաւ, իսկ շատեր անոնցմէ, որ բաղդաւոր (?) եղած են ներս ընդունուելու, անգործ և յուսահատ կը շրջին փողոցները, շատ անգամ անօթի և անպատսպար կացութեան մատնուած։

Ի՞նչ պիտի ըլլայ այս հարիւրաւոր խեղճ գաղթականներուն վիճակը, որ ֆիզիքապէս ու բարոյապէս կը փչանան եանկիներու այս երկրին մէջ, ոչ ոք կը մտածէ։ Անոնք ձգուած են իրենց սև բաղդին ու անագորոյն ճակատագրին, որուն ուղղակի սանձողն եթէ իրենք չեն, գէթ մասամբ պատասխանատու են։

Մեր ազգային պաշտօնական մարմիններուն կոչը, թէ «մի՛ գաղթէք», կարծես թէ խուլ ականջներու հանդիպած է և ի զուր տեղը եղած, այլապէս պէտք էր արտագաղթը չափով մը նուազէր և ոչ թէ աճէր։ Մեզ կը թուի թէ՝ ազգային մարմինները ուրիշ միջոցներ փորձելու են արտագաղթը կասեցնելու, համանաւանդ այս պարագային, որ Ամերիկայի ամեն կողմը գործերը թոյլ, գործարանները փակուած և հազարաւոր գործաւորներ պարապ կը թափառին ապրուստնին ճարելու մտահոգութեամբ լեցուած։

«Մշակի» վրայ աւագ պարտականութիւն կը ծանրանայ գէթ կովկասահայ գիւղացիութիւնը զգուշացնելու, որ չգաղթեն. ներկայ պայմաններուն տակ Ամերիկա գաղթելը յիմարութիւն է և կեանքի քայքայում...։ Մաղաք Գ. Պէրպէրեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԻՑ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Թաւրիզ, 10 մայիսի

Այս րոպէիս ողջ Պարսկաստանի սակաւաթիւ մամուլն զբաղված է պարլամենտական ընտրութիւնների հարցով։ Այդ խնդրի շրջքում Ատրպատականը գրաւել է ինքնուրոյն տեղ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընտրութիւն կատարելու փորձերը պատահել են ժողովրդական խլրտումների և անաջողութեան։

Թաւրիզում լոյս տեսնող պարսկերէն շաբաթաթերթը, «Ջերիդէի Իսլամի», որ միևնոյն ժամանակ Ատրպատականի նահանգական իշխանութեան օրգանն է, իր այս տարվայ 1 մայիսի № 13-ում ընտրութիւնների առիթով տպեց Թաւրիզի ռուսաց ընդ. հիւպատոս Օրլովի հետևեալ պաշտօնական գրութիւնը՝ ուղղված նահանգապետ Շուջա-ուդ-Դովլէին և վերջինիս պատասխանը։

«Յանուն ռուսաց պետութեան արտաքին գործերի մինիստրի և Թէհրանի դեսպանի յայտնում եմ ձեզ, որ մէջլիսի պատգամաւորների ընտրութիւնը պէտք է կատարվի նաև Ատրպատականում։ Իրանի կառավարութեան ժողովրդի ոչ անդորրութիւնն ու խառնակ վիճակի գոյութիւնը վերագրվում են ընտրութիւնները չը կատարվելուն. հետևաբար պետութեան այդ կողմը նկատելով հիւանդ կողմ՝ հարկաւոր է դարման տանել նրան, ջանք չը խնայելով որ ընտրեալները լինեն չէզոք, անկողմնակալ և պետութեան շահերի համար սրտանց աշխատող անձնաւորութիւններ։ Մէջլիսը գոյութիւն ունենալով երկիրը կազատվի տագնապալից վիճակից և կը դառնայ բարւոք կացութեան։

«Իրանի պետութեան ընտրական գործն ի կատար ածելը ռուսաց կայսերական կառավարութեան կողմից հաւանութեան արժանացած լինելով, ըստ հրամանի իմ պետութեան պարտք համարեցի այս տեղեկութիւնները ձեզ յայտնել և յարգանօք խնդրել, որ ամեն ջանք ի գործ դնէք, որպէսզի ընտրութեան ձեռնարկութիւնը խոչընդոտների չը պատահի և անդորրութիւնն ու ապահովութիւնը տևական լինեն։

«Յարգանօք կրկնում և շեշտում եմ ձեզ ընտրութեան գործն ի կատար ածելու կարևորութիւնը»։

Շուջա-ուդ-Դովլէն հետևեալ պատասխանն է տուել հիւպատոսին, թւագրված ապրիլի 28-ից.

«Ձեր վսեմութեան № 339 գրութիւնը ստացայ և ըստ ամենայնի վերահասու եղայ նրա պարունակութեանը։

«Ատրպատականում կատարվելիք ընտրութեան գործը, որ յայտնել էիք մեզ, ներքին գործերի մինիստրի կողմից ես համառօտ գրութիւններ են ստացվել, № № 8152, 3167 և 1852, որոնց պատասխանել եմ իր ժամանակին՝ բացատրելով Ատրպատականում ընտրութիւնների առիթով իմ կարծիքը։ Այժմ ես ձեզ եմ պատասխանում և արտայայտում իմ կարծիքը։

«Իրանի ժողովուրդն ընդհանրապէս, իսկ Ատրպատականի ազգաբնակութիւնը մասնաւորապէս ջերմ սիրող են իսլամական կրօնին, և մի որևէ կազմակերպչական գործ մտցնելու համար նրանց մէջ՝ պէտք է իսլամական կրօնի հիմունքները հաստատուն պահել և այսպիսով երաշխաւորել պետութեան անկախութիւնը, երկրի և ժողովրդի ապահովութիւնն ու անդորրութիւնը։ Օտար երկիրներում մուտք գործող սահմանադրութիւնն ու հիմնական կանոնադրութիւնը ոչ մի հակակրօն ուղղութիւն չէ առաջացրել ժողովուրդների և նրանց աւանդական կարգերի մէջ՝ պահպանելով նրանց էութիւնը։ Բայց դժբաղդաբար Իրանում այս մի քանի տարիների ընթացքում անհաստատ թշնամութիւններն ու տգիտութիւնը և ժողովրդի ոյժի և ընդունակութեան բացակայութիւնից՝ խառնակիչ և չարամիտ յեղափոխականները երկիր մտնելով ու գործերին միջամտելով վատթար հետևանքներ առաջացրին, ինչպէս նաև հակառակորդ հանդիսացան անկախութեան ու երկրի պահանջներին։ Նրանք շարժվեցին շարիաթի հակառակ ուղղութեամբ։ Գլխաւոր արգելողն եղան հոգևորականութեան, որպէսզի նա առաջ տանէր կրօնի ճշմարտութիւնները, և հոգևորականներին մահով պատժեցին։ Յեղափոխականները թէ Թաւրիզում և թէ շըրջակայքում 20,000-ի չափ մարդիկ սպանելով յարգելի կրօնապետներին ևս մահվան դատապարտեցին, աւերելով ու յափշտակելով նրանց տները։ Օտարահպատակներից որչափ ապրանք խլեցին, թալանեցին։ Թալանչիներից մէկը ղարադաղցիների և շահսևանների հոսանքն էր, որոնցից ռուսաց և պարսից կառավարութիւնները մեծ ծախսերով կարողացան յետ առնել յափշտակված ապրանքները։ 5 տարուց աւել Ատրպատականում առևտրական կեանքը դադար առաւ. ճանապարհները փակվեցին. անձի և գոյքի ապահովութիւնը չքացաւ, և այս ժամանակ երկրի խեղճ ազգաբնակութիւնը գիշերվայ հացին կարօտ մնաց։ Այսպիսի հանգամանքներումն է, որ ռուսաց պետութիւնն ու պարսից կառավարութիւնը հրամայում են ընտրութեան գործը գլուխ բերել,—ուրիշ ճար չունեմ։ Սակայն այս մասին իմ կարծիքը կը յայտնեմ, չը գիտենալով թէ ինչ կը լինի իրերի վախճանը։

«Ի նկատի պիտի ունենալ մի հանգամանք, որ մեր երկրի սահմանածայրերում բուն դնող աշիրաթները մաշրութա ասելով հասկանում են այն, որ բացատրել եմ վերևում։ Հէնց որ մաշրութա բառը լսեցին, սկսելու են աղմուկ և իրարանցում առաջացնել, սպանութիւններ անել, յափշտակութիւններ ու կողոպուտներ մտցնել՝ ձգտելով վտանգել հասարակաց ինչքն ու պատիւը, կործանել կրօնի հիմունքները և այդպիսով երկրի կարգ ու կանոնը վերիվայր անել։

«Որպէսզի հնարաւոր լինի բոլոր կարգապահութիւնը տեղին կատարել, այդ անհրաժեշտօրէն կապված է մի քանի պայմաններ. ա) Վերոյիշեալ ըմբոստութիւնների և անկարգութիւնների առաջն առնելու համար գլխաւորապէս հարկաւոր է ունենալ 5000 հետիոտ և ձիաւոր զինուորից բաղկացած մի բանակ Ատրպատականի համար, որ ըստ հարկաւորութեան կենտրոնում մնայ և ի պահանջել հարկին ուղարկվի նաև գաւառները։ բ) Այն պատգամաւորները, որոնք ընտրվելու են Ատրպատականում, նրանց ընտրութեան գլխաւոր պայմանը պէտք է լինի հակառակ շարիաթի տրամադրութեան որևէ հակառակ բառ և ընդդէմ Ղուրանի պատուէրների ոչ մի անհիմն վարմունք ցոյց չը տալ և թոյլ չը տալ։ Արտաքոյ շիա կրօնի ոչ մի այլ կրօնի հաւանութիւն և ընդունելութիւն չը պէտք է անեն. և եթէ անկարող հանդիսանան այդ կատարել, պէտք է հրաժարվեն անմիջապէս, գիտենալով որ Իրանի ժողովուրդը ընդդէմ իսլամութեան տեղի ունեցող հակակրօն շարժումներից խորշում է ու զայրանում։ Ինչպէս արդէն յայտնի է, հիմնական կանոնադրութեան առաջին յօդուածը արտամադրում էր ամուր պահպանել իսլամի կրօնի հիմունքը. բայց ընդհակառակը մի դասակարգ մարդիկ մտնելով գործերի մէջ, իրանց պապերից աւանդ հասած կրօնը ստահարկեցին և սկսեցին տպագրութեան յանձնել «Սէնվը Նէքի» անուն գիրքը *) և անգամ լրագիրներում բացորոշ գրեցին մեր կրօնի պակասութիւնները. մինչդեռ խեղճ մուսուլման հասարակութիւնը, առ անի յեղափոխականների, կուլ տուեց իր վիշտը և լռեց։ Ամենևին տեսնված բան չէ, որ մի որևիցէ ժողովուրդ, ընդունելով հանդերձ սահմանադրութիւնը, արհամարհէ իր սեփական կրօնը և դաւանափոխ լինի։ Յեղափոխականները և չարամիտ մարդիկ, գործի մէջ մտնելուց յետոյ, մաշրութէ անունը շահագործեցին և հարկադրեցին շատ մարդկանց իրանց կրօնից ցրտանալու և այն փոխելու։ Իրանի տէրութիւնը Ատրպատականում այսպիսի անձնաւորութիւնների ի կարգ հրաւիրելու և պատժելու համար ոյժ չունի։ գ) Պետութիւնը անկախութեամբ է պետութիւն. բայց Իրանի միայն անունն է մնացել։ դ) Քանի որ Ատրպատականում դեռ ևս ապահովութիւնը կատարելապէս չէ հաստատվել, և հարևան մեծ պետութիւնները չեն հաստատել այդ ապահովութիւնը, Ատրպատականը պէտք է ենթարկվի պաշտպան վիճակի և երկիրը կառավարվի զինուորական օրէնքներով։ ե) Մէջլիսի պատգամաւորների կեանքը և գոյքը պէտք է ապահով լինի ամեն տեղ և անձեռնմխելի։

«Այսու հանդերձ սոյն նախապատրաստութիւնները լինելուց յետոյ ևս նորից վնասներ ու անկարգութիւններ ի նկատի կան. և այդ նրա համար, որ մաշրութէ թէ այլ նման կարգադրութիւններ հարկ է որ ժողովրդեան հաւանութիւնը վայելեն և համապատասխանեն նրա տրամադրութիւններին։ Ատրպատականի ժողովուրդը այս գործին (ընտրութեան) ամենևին հաւան չէ. միայն կախումն ունի երկու պետութիւնների՝ ռուսաց և պարսից հրամաններից։

«Ի դէպ զինուորական ոյժ ուզելս գուցէ վերագրեն այն բանին, որ ես հակառակ ուզում եմ գնալ լինելիք ընտրութեան գործին։ Բայց եթէ Թէհրանի և Թաւրիզի հին արձանագրութիւնները երևան գան, պէտք է տեսնենք, որ Նասրէդդին շահի ժամանակ նոյն իշխանութեամբ և ուժով, և Մուզաֆֆէրէդդինի օրօք, երբ ոչ մի քաղաքական խլրտումներ չը կային, Ատրպատականում միշտ 6000-ից աւելի մի բանակ կար. մինչդեռ հիմա, չը նայած պէտքին, Ատրպատականում ոչ մի զինուորական ոյժ չը կայ»։

Գեներալ նահանգապետը Շուջա-ուդ-Դովլէն վերոյիշեալ պատասխանի մի պատճէնը նոյնպէս ուղարկել է պարսից ներքին գործերի մինիստրութեան։ Հայկազուն

---

*) Պարսկաստանի մէջլիսից յետոյ Թէհրանում տպվեց սոյն գիրքը, որ քննադատութեան նիւթ է արել Մահմէդի կեանքն ու վարդապետութիւնները։ Հայկ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Դուրացցօյից հեռագրում են, որ ապստամբութիւնը Ալբանիայում արագ չափերով տարածվում է։ Ազգաբնակութիւնը միանում է ապստամբներին։ Զօրքը անզօր է որևէ դիմադրութիւն ցոյց տալու, միւս կողմից մեծ թւով զինուորներ դասալիք են լինում։

◆ Լոնդոնից հեռագրում են, որ Անգլիայի յարաբերութիւնները Աւստրիայի և Իտալիայի հետ վատանում են։

◆ «Гривна»-ի Կ. Պօլսի թղթակիցը խօսակցութիւն ունեցաւ մի ռուս պետական անձի հետ Լիվադիայում Թալէաթ-բէյի այնտեղ գտնված ժամանակ։ Այդ անձի կարծիքով Լիվադիայի բանակցութիւնները նպատակ ունէին ոչնչացնել այն վաղեմի թիւրիմացութիւնները, որոնք գոյութիւն ունէին ռուսների և թիւրքերի միջև և ստեղծել յարմար հող հնարաւոր համաձայնութեան համար։

◆ Ինչպէս յայտնի է, շուտով Կօնստանցայում հանդիպելու են ռուսական և գերմանական միապետները ռումինական թագաւորի հետ։ Այդ առիթով գերմանական մամուլը գրում է, թէ Ռուսաստանը ռումինների համակրութիւնը ձեռք բերելու նպատակով մտադիր է վերադարձնել Ռումինիային Բեսարաբիայի մի մասը։

◆ Բօլգարական նարօդնիկների օրգան «Միր»-ի խմբագիրը դատվում է Սօֆիայում նրա համար, որ զրպարտել էր Ֆերդինանդ թագաւորին յունիսի 16-ի հրամանն արձակելու մէջ։ Խմբագրին պաշտպանում է Թօդօրօվը։ Սպասվում է սենսացիօն դատավարութիւն։

◆ Պարիզում պրոֆ. Ռիմպէնօ Դէսէգլին ներկայումս աջող փորձեր է կատարում առանց ցաւերի որդեծնութիւն կատարելու, ներարկելով յղի կնոջ մարմինը ինչ-որ շիճուկ։

◆ Թէհրանից հեռագրում են, որ պարսից կառավարութիւնը եռանդով ձեռնարկել է պայքարել արբեցողութեան, անառակութեան ու կանանց նորաձևութիւնների դէմ։

◆ Վիէննայից հեռագրում են, որ մեծ պետութիւնները, բացի Աւստրիայից և Իտալիայից, մերժեցին պրինց Վիդի խնդիրը, ուղարկելու զօրք Ալբանիա։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.։ **Փոստատար գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22— 4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Փոստատար գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլօվօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Փոստատար գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագոններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեազ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 18/17—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 14/13—11ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄ.— **արդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Փոստատար գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Փոստատար գնացքը** № 4—9 ժ. 30 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Փոստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.։ **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագոններով)—4 ժ. 41 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16/15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ 25 ր. առ.։

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԷՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլէկտրոթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
ա. օ.) 112. 100—74

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»
պարզ և հասկանալի լեզուով ամեն մարդու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որտեղ չը կայ բժիշկ և դեղատուն։ Ամեն տեսակ պատահական փորձանքներ և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղատանով և բացատրութիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև—«Վեներական ախտերի և ծածուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ րէցէպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Ծիծաղի տկճոր», անէկդօտներ։ Գինը 20 կ.։ «Կնիկարմատի շալվարը», վօդևիլ։ Գինը 20 կ.։ «Րաֆֆիի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Միևնոյն դագաղում» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկաներով առաջուց ուղարկել։
(հ. կ.) 327. 100—12



Փականա-մետաղեղէն.
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ՉԱՅՐՎՈՂ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
ՎԵՐՆԵՐ ՊՖԵՅԼ
Վօկզալնայա փ. № 3.
(օ.մ.) 100. 100—41

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով, ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ և գիմնազիաների ու այլ դպրոցների մտնելու ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՅՈՎՀ. ՋԱԲ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան քննութիւնները մայիսի 31-ին, պարապմունքները՝ յունիսի 2-ից։ Ծախվում է հաշւապահութիւնը ինքնուրոյն կերպով սովորելու դասագիրք։ Միխայլօվսկի պր. № 36.
(օ. մ.) 411. 10—8

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՋԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовскаяулица, домъ казенный